ՀՀ ԿՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՄՎԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ

Ը. 00.01. «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսությունը հաստատվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գ.Ս.Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Խ. Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ.Ն. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական
ճարտարագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 8-ին ժամը 15:00 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն 0009, ք. Երևան, Արովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 8-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Հ.Առաքելյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումով Խորհրդային Միության տնտեսական համակարգի հիմքում ընկած արտադրության միջոցների համաժողովրդական սեփականության վերափոխման սկիզբը դրվեց: Արդյունքում մեր նորանկախ պետականության տնտեսության զարգացման ելակետը դարձավ մասնավոր սեփականությունը: Սեփականության այս ձևն էր ընկած նաև Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսակարգի հիմքում: Թվում է, նրա գոյության շրջանում որդեգրված տնտեսական կառավարման եղանակներից դժվար է որոնել և գտնել ուսանելի կողմեր այսօրվա համար: Իրականում Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կառավարման շատ առանձնահատուկ կողմեր չեն կորցրել իրենց նշանակությունը: Հենց այդ կողմերի արդիականությունը կարևորելու և հիմնավորելու, այն այսօր կիրառելու հրամայականի մեջ է մեր ատենախոսության նպատակներից մեկը: Թեմայի արդիականությունը կայանում է հետևյալներում.

Առաջին՝ ակնհայտ ճշմարտություն է, որ պետությունը տնտեսության մեջ ունի կարգավորիչ դեր, և եթե նրա հիմքում ընած են ազատ շուկայական հարաբերությունները, ապա՝ դա ամենևին չպետք է ենթադրի, թե նա չպետք է պահի վերահսկողությունը մասնավոր բնույթի ձեռնարկատիրական գործունեության վրա: Այս առումով, Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կառավարումը մատնանշում է հետևյալ ուսանելի փորձը՝ **պետությունը պետք է հանդիսանա տնտեսության համակարգված կարգավորողը, օրենսդրական առումով որդեգրված տնտեսական քաղաքականության գծից շեղումների բացառողը նաև**:

Երկրորդ՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը լինելով պետություն, որտեղ իշխում էր մասնավոր սեփականություն և անհիրավահավասարություն, զուգընթաց ուներ տնտեսական և իրավական այնպիսի համակարգ, **որն, անկախ այդ անհավասարությունից, հասարակության յուրաքանչյուր շերտի ներկայացուցչի պաշտպանված էր պահում իր համար նախատեսված օրենքների շրջանակում:**

Երրորդ՝ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կառավարման համակարգում, անկախ մասնավոր սեփականության կամ, որ նույնն է՝ հողային սեփականության խոշոր, միջին, կամ փոքր տեսակներից, գոյություն չուներ բևեռացում և տնտեսության ոլորտների մոնոպոլացում: Արտադրաեղանակների բազմազանության բացակայության պայմաններում խրախուսվում էր ազատ մրցակցությունը, որը տնտեսության զարգացման գրավականն է եղել՝ անկախ պատմական ժամանակներից և պետական կառավարման համակարգերից:

Թեմայի գիտական նորույթը: Հիշյալ ատենախոսության գիտական նորույթը նախ այն է, **որ եթե նախկինում Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսակարգի մասին անդրադարձներում արտադրահարաբերությունների վերլուծության հիմքում դրվում էր մարքս - լենինյան տեսությունը, ապա այս ուսումնասիրության մեջ այդ հարաբերությունները դիտարկված են բոլորովին այլ հայեցակարգային հիմքերով՝ ազատ շուկայական հարաբերությունների՝ որպես տնտեսության զարգացման կարևորագույն պայմանի ըմբռնումով, հարաբերություններ, որոնք փորձել ենք բացահայտել քննական - վերլուծական մեթոդաբանությամբ:** Երկրորդ կարևոր նորույթն այն է, որ **ատենախոսության մեջ բացահայտվում են և մեկնաբանվում այն իրավատնտեսական հիմքերը, որոնք հանգեցրել են Կիլիկիայի հայկական թագավորության՝ որպես միապետական կառավարման տիպի պետության, տնտեսության կառավարման յուրօրինակ և արդյունավետ համակարգին:** Երրորդ կարևորագույն նորույթը **ատենախոսության մեջ Կիլիկիայի թագավորության տնտեսական համակարգի կառավարման առանձնահատկությունները լուսաբանելն է հայկական ներկայիս պետականության տնտեսական կառավարման համակարգի համար կիրառելիության տեսանկյունից:** Չորրորդ կարևոր նորույթը **Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական հզորության կարևոր պայմաններից մեկի՝**

արտադրողական հիմնական ուժերի նկատմամբ պետության յուրահատուկ վերաբերմունքի բացահայտումն է: Անկախ իրենց սոցիալական դիրքից՝ պետության քաղաքացիները իրենց համար նախատեսված օրենքների սահմաններում պաշտպանված էին:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Մեր ատենախոսության առաջին խնդիրն ենք համարել բացահայտել հիշյալ թագավորության տնտեսական համակարգի յուրօրինակությունը և էությունը: Հիմնավորել տեսակետը, որ Կիլիկիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա կար հայկական, արևմտաեվրոպական և բյուզանդական ազդեցությունների կնիքը: Կիլիկիայի հայկական թագավորության ինչպես քաղաքական, այպես էլ տնտեսական կարգերը որակել ենք որպես բուն հայկական թագավորությունների նույն կարգերի առավել կատարելագործված տեսակ, որը պայմանավված էր արևմտաեվրոպական և բյուզանդական ազդեցությամբ:

Ավանդական և արտաքին գործոններով էր պայմանավորված Կիլիկիայի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կարգերի ինքնօրինակությունը. **դրանք ոչ զուտ հայկական էին, ոչ էլ արևմտաեվրոպական, այլ հետևանք էին հայկական և արևմտաեվրոպական քաղաքական և տնտեսական կարգերի գլխավոր բաղադրամասերի միաձուլման**:

Այսպիսով՝ որպես առաջին նպատակ՝ մենք մեր ատենախոսության մեջ փորձել ենք ապացուցել այն հայեցակարգի ճշտությունը, որ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգի առանձնահատկությունը պայմանավորված էր հայկական ավանդականի, բյուզանդականի և արևմտաեվրոպական ազդեցությամբ:

Ատենախոսության մյուս կարևորագույն խնդիրը Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերի բացահայտումն է:

Այնուհետև, որպես կարևորագույն խնդիր ատենախոսության մեջ ներկայացրել ենք տեղական կառավարման ինստիտուտները:

Դրանցից նախ և առաջ առանձնացվել են եկեղեցին և իշխանական կալվածքները:

Փաստերի ուսումնասիրության վրա հենվելով՝ այն տեսակետն ենք զարգացրել, որ Կիլիկիայի հայկական թագավորությունում հայոց եկեղեցին համապետական նշանակության կառույց էր միայն հավատի և բարոյականության խնդիրների առումով, իսկ քաղաքական և տնտեսական բնագավառներում զուրկ էր նման հնարավորությունից:

Ատենախոսության հաջորդ կարևորագույն խնդիրը համարել ենք ավատատեր իշխանների դերի ճշգրտումը տնտեսական աստիճանակարգության մեջ կամ որ գրեթե նույնն է՝ տնտեսական ինստիտուտների:

Ատենախոսությում տնտեսական կառավարման աստիճանակարգության մեջ տեղ է հատկացվել է քաղաքային ինքնավարության մարմիններին, իսկ որպես ամենաստորին կարգադրիչ մարմին՝ ավագների խորհրդին:

Դատական ինստիտուտները ներկայացվել են տնտեսահիրավական գործառույթների ենթախորքի վրա:

Եվ վերջապես, մենք հետամուտ ենք եղել մի կարևորագույն խնդրի ևս, այն է՝ իրականացնել ՀՀ և Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կառավարման մեխանիզմների համեմատական քննություն: Սա կատարել ենք այն համոզմունքից դրդված, որ անկախ պատմական ժամանակաշրջանների տարբերություններից, Կիլիկիայի հայկական թագավորության՝ իր ժամանակի հզոր տնտեսություն ունեցող այս պետության տնտեսական կառավարման փորձից այսօրվա համար էլ մնացել են դասեր և արդիականությունը չկորցրած տնտեսական դրույթներ:

Հիմնահարցի ուսումնասիրության աստիճանը: Անհրաժեշտ է նշել, որ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգերի, ինչպես նաև տնտեսական կառավարումն իրականացնող ինստիտուտների վերաբերյալ առկա է հարուստ աղբյուրագիտական բազա: Քիչ չեն նաև օտար հեղինակների գրած աշխատությունները, որոնք, ճիշտ է, չեն վերաբերում միայն արտադրատնտեսական հարաբերություններին կամ միայն տնտեսական ոլորտին, բայց բավական առատ

նյութեր են պարունակում՝ այդ ոլորտի նկատմամբ հիմնական պատկերացում կազմելու համար:

Կիլիկիայի հայկական թագավորության 11-14-րդ դդ. պատմության և, բնականաբար, նաև իշխող արտադրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել հիշյալ ժամանակահատվածի հայ պատմիչների (և ոչ միայն պատմիչների) աշխատություններում[1]:

Այս բազում սկզբնաղբյուրներից թերևս ամենագնահատելին Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքն» է: Այն արժեքավոր է մի քանի տեսանկյուններից: Այն օգնում է լիարժեք պատկերացում կազմելու Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերի մասին:

Բավական ուշագրավ գործ է նաև Սմբատ Գունդեստաբլի «Տարեգիրքը»[2]:

Սա թեպետ հիմնականում իրենից ներկայացնում է պատմական իրադարձությունների հակիրճ շարադրանք (915-1274 թթ) և գրեթե չի առնչվում ներքին, այդ թվում տնտեսական խնդիրներին, բայց, այնուամենայնիվ անուղղակի պատկերացում կազմել է ստիպում այն քաղաքական համակարգի մասին, որն ուներ Կիլիկիայի հայկական իշխանությունը, ապա թագավորությունը: Որպես արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ հարկ է առանձնացնել հիշատակարանները, որոնք մեզ են հասել ձեռագիր վիճակում, բայց որոնք հիմնականում հրատարակվել են[3]:

Որպես արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ առանձնանում են միջնադարյան կիլիկիահայ նոմինալիստ փիլիսոփա Վահրամ Ռաբունու մի երկը[4], որն օգնում է պատկերացում կազմել թագավորական իշխանության այն ժամանակաշրջանում առկա ըմբռնումների և փաստորեն դրա էության վերաբերյալ:

Ատենախոսության շարադրման համար ոչ որպես գլխավոր, սակայն շահեկան սկզբնաղբյուրներ են Ներսես Լամբրոնացու և Գրիգոր կաթողիկոսի աշխատությունները[5]:

Մեր ատենախոսության շարադրման համար օգտագործել ենք նաև այսպես կոչված օտար սկզբնաղբյուրներ, որոնք նույնպես օգնում են պատկերացում կազմել Կիլիկիայում իշխող տնտեսական հարաբերությունների, դրանք կարգավորող ինստիտուցիոնալ հիմքերի մասին: Օտար աղբյուրներ ասելով պետք է հասկանալ արաբ և բյուզանդացի հեղինակներին վերաբերող նյութերը, ինչպես նաև արևմտաեվրոպական մի շարք երկրների արխիվներում եղած փաստաթղթերը, որոնք արտացոլում են Կիլիկիայի հայկական թագավորության, հարևան ու եվրոպական տերությունների տարբեր, այդ թվում նաև առևտրատնտեսական փոխհարաբերությունները: Դրանք հիմնականում հրատարակվել են[6]:

---

[1] Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, Երեւան, 1971, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, Պրոֆ. Ս. Ե. Հակոբյան, Գյուղական համայնքը Հայաստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 1,1961, Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, Ժամանակագրութիւն տեառն Միքայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղեմ, 1871, ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1858, Վահրամ Ռաբունիի, Բան ի Յայտնութեն տեառն ու օծումն Լեւոն Գ արքայի,Յերուսաղէմ, 1875, Սամուէլ Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958, նույնի՝ Տարեգիրք, Վենետիկ, 1956 և այլն:

[2] Տե՛ս Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, 1956:

[3] Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, Վենետիկ, հ. 1, 2, 1914-1924, Տաշյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վենետիկ, 1896 և այլն:

[4] Տե՛ս Վահրամ վարդապետի ատենադպրի Լեւոն արքայի Բան ի յայտնութիւն տեառն եւ օծումն Լեւոնի Գ արքայի, Երուսաղեմ, 1875:

[5] Տե՛ս Ներսեսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւնք, թուղթք եւ ճառք, նույնի՝ Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ, Վենետիկ, 1847, նույնի՝ Թուղթ առ Լեւոն, Վենետիկ, 1865, Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցելոյք նամակաւն, Վենետիկ, 1865:

[6] Տե՛ս Recuill des Historiens des Groisades, Documents orienteaux, Paris, 1972, Historiens grecgues, Historiens Armeniens, Paris, 1869, Paris, 1875, V. Langlois, Le tresor des chartes d'Armenie, Venis, 1863.

Որպես գնահատելի սկզբնաղբյուր կարելի է առանձնացնել Լևոն VI թագավորի (1373-1375) Հովհաննես Դարդելի աշխատությունը[7]:

Մեզ համար հետաքրքրական են Դարդելի «Ժամանակագրության» հատկապես 1321-1375 թթ. ընդգրկող հատվածին առնչվող նյութերը, ուր գնահատելի տեղեկություններ են հաղորդվում Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հարաբերությունների, պետական և տնտեսական կարգերի, գործակալությունների վերաբերյալ:

Կիլիկիայի հայկական թագավորության իշխող տնտեսական հարաբերությունների, մասնավորապես տեղական կառավարման, տիրոջ ու վասալի միջև առկա փոխհարաբերությունների, ինչպես նաև իրավական հարաբերությունների մասին գնահատելի սկզբնաղբյուր է «Անտիոքի ասիզները»[8]:

Կիլիկիայում գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին հետաքրքիր հայեցակարգեր է մշակել մեկ ուրիշ հեղինակ՝ Ն. Ռ. Թովմասյանը[9]:

Կիլիկիայի հայկական թագավորության գյուղացիության դրության և հողային հարաբերությունների որոշ հարցերի է անդրադառնում Գ. Ա. Դմիտրիևը իր մի հոդվածում[10]: Ընդհանուր առմամբ նրա արտահայտած գրեթե բոլոր տեսակետները վիճելի են և բխում են խորհրդային ժամանակաշրջանում իշխած գաղափարական պարտադրանքներից, որոնց հիմքում, ինչպես նշեցինք, մարքս-լենինյան արհեստածին տեսություններն էին ընկած:

Ատենախոսությունը շարադրելիս, մենք չենք բավարարվել միայն Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգին, դրա ինստիտուցիոնալ հիմքերին վերաբերվող սկզբնաղբյուրներից կամ ուսումնասիրություններից օգտվելով:

Տնտեսական համակարգի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել նաև այս պետության քաղաքական պատմությունը, ուստի մենք աշխատության շարադրման ընթացքում օգտագործել ենք Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությանը վերաբերող բազում սկզբնաղբյուրներ և աշխատություններ ևս[11]:

Իսկ աշխատության երրորդ գլխի շարադրման ընթացքում («Կիլիկիայի հայկական թագավորության և Հայաստանի Հանրապետության տնտեսական կառավարման մեխանիզմների համեմատական քննություն») օգտագործել ենք նաև Հայաստանի ներկայիս տնտեսական քաղաքականությանն առնչվող չհրապարակված արխիվային նյութեր և հրապարակված սկզբնաղբյուրներ, ինչպես նաև որոշ տեղեկություններ ժամանակակից պարբերական մամուլից[12]:

Ատենախոսության մեթոդաբանությունը և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունն ստեղծվել է հրապարակված և հիմնահարցի վերաբերյալ առկա աշխատությունների օգտագործմամբ: Մենք առաջնորդվել ենք քննական-վերլուծական մեթոդաբանությամբ, ինչը հնարավորություն է տվել փաստերի ուսումնասիրությունից հանգել տեսական ընդհանրացումների: Ատենախոսությունը կարևոր է Կիլիկիայի

---

[7] Տե՛ս Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891:

[8] Տե՛ս Assise d'Antioche, trad. par I. Alishan Venise, 1876.

[9] Ն. Ռ. Թովմասյան, Սոցիալ-տնտեսագիտական գաղափարները Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, Երևան, 1966, էջ 210-216:

[10] Г. А. Дмитриев, Некоторые вопросы поземельных отношений и пологиения крестьян в Киликийской Армении XII-XIII вв., տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, Երևան, 1970, էջ 107-123:

[11] Դրանցից շատերը հիշատակեցինք: Ավելացնենք հետևյալները ևս՝ Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, Գարագաշյան Ա., Քննական պատմութիւն հայոց, մասն Ա-Դ, Թիֆլիս, 1895, Լեո, Հայոց պատմության, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1976, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. I և II, Երևան, 2005 և 2007, Կլոդ Մութաֆյան, Կիլիկյան կայսրությունները խաչմերուկում, Երևան, 2001 և այլն:

[12] Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 163, գ. 341, թ. 1, 2 Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1995թ., հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996, Մարդկային զարգացման զեկույց (1990-1995), Երևան, 1995, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1990, Երևան, 1991, նույնը, 1993-1994, Երևան, 1995 և այլն:

հայկական թագավորության տնտեսական համակարգի առանձնահատկությունների, տնտեսական կառավարման մեխանիզմների, արտադրատնտեսական հարաբերությունների և տնտեսության այլ ոլորտներում իրականացված քաղաքականության պատմական դասերի ճիշտ ընկալման և նաև՝ դրանցից շատերը նաև այսօր կիրառելու տեսանկյունից: Ատենախոսության արդյունքները կարելի է օգտագործել նաև հայ տնտեսագիտության պատմությանը վերաբերող առարկաների դասավանդման ընթացքում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները հոդվածների տեսքով հրապարակվել են Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող բազմաթիվ գիտական հանդեսներում և ժողովածուներում[13]: Այդ դրույթները կարող են նպաստել տնտեսական պատմության և տնտեսագիտության բուհական դասընթացի լրացմանը:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, հինգ ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և կազմում է 115 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում է հիմնահարցի գիտական նորույթն ու արդիականությունը, նշվում են նրա նպատակներն ու խնդիրները, տրվում թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլուխը, որը կոչվում է **«Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգը»,** բաղկացած է երկու ենթագլուխներից: Դրանցից **առաջինում** լուսաբանվում են Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգերի ձևավորման առանձնահատկությունները:

Կիլիկիայի հայկական քաղաքական միավորումը սկզբնավորվել է բյուզանդական կայսրության տիրույթներում, 1080թ. -ից որպես իշխանություն, 1198 - ից՝ որպես պետություն:

Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության հիմքում ընկած էր արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, որն ինքնին ենթադրում է եկամուտների անհավասարաչափ բաշխում, բայց, անկախ այդ հանգամանքից, կարելի է խոսել այդ նույն եկամուտների բաշխման համակարգի արդյունավետության մասին, որն ամրագրված էր իրավական ակտերով և անկախ սոցիալական անհավասարությունից, յուրաքանչյուր սոցիալական շերտի համար նախատեսվածը հասցնում էր այդ շերտի յուրաքանչյուր սուբյեկտին:

Կիլիկիայի հայկական թագավորության սոցիալ-տնտեսական հարաբերությունները բարդ և յուրահատուկ էին նրանով, որ իրենց վրա կրում էին հայկական, արևմտաեվրոպական և բյուզանդական սովորույթների կնիքը[14]:

Արդ, ուրեմն, ավանդական և արտաքին գործոններով էր պայմանավորվում Կիլիկիայի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կարգերի ինքնատիպությունը, որոնք ոչ զուտ հայկական էին, ոչ էլ արևմտաեվրոպական, այլ՝ հետևանք էին

---

[13] Ներսես Լամբրոնեցու և Վահրամ Ռաբունու դերը կիլիկիահայ իրավական մտքի զարգացման գործում, «Օրենք և իրականություն», հանդես, թիվ 183, Երևան, 2011, Պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները Սմբատ Գունդստաբլի իրավական մտածողության մեջ, նույն տեղում, թիվ 186, Երևան, 2011, Եկեղեցու տնտեսական դերն ու գործառույթները Կիլիկիայի հայկական թագավորությունում, «Մխիթար Գոշ» հանդես, թիվ 33, Երևան, 2012, Արքունիքի տեղը Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերում, «Ակունք», 2011, Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսակարգի ձևավորումը և առանձնահատկությունները, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտ. հոդվածների ժողովածու, թիվ 15, Երևան, 2012, Գյուղացիության տեղը Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հիերարխիայում, «Ակունք», գիտ. հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 215:

[14] Տես Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ.հ. III, Երևան, 1976, էջ 715, Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ պրոֆ. Ստ. Տ. Մելիք-Բախշյանի, Երևան, 1975, էջ 543, Ս. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 45-46:

հայկական և արևմտաեվրոպական քաղաքական և տնտեսական կարգերը կազմող գլխավոր բաղադրամասերի միաձուլման:

Կիլիկիայում տնտեսական կառավարումը, այն իրականացնող ինստիտուցիոնալ հիմքերը բացառապես չէին կրում ոչ քրիստոնեական քաղաքական միավորումների ազդեցությունը:

Սրանում կարևոր նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ արաբական տիրապետության շրջանում պահպանվեցին հայկական իշխանական ինչպես նաև եկեղեցական կալվածքները, որոնք արաբական խալիֆայության նկատմամբ կատարում էին սոսկ իրենց հարկային և զինվորական պարտականությունները:

Վերոշարադրյալից բխում են հետևյալ հայեցակարգային սկզբունքները.

Առաջին՝ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգը չէր կարող չկրել հայկական նախորդ թագավորությունների նույն կարգի ազդեցությունը, չէր կարող չբխել տնտեսական հարաբերությունների հայկական ավանդույթներից, քանզի հայկական իշխանությունները, իշխանապետությունը, որը վերածեց թագավորության, ձևավորել են բուն Հայաստանի նախկին իշխանները, որոնք նաև ավատատերեր էին և իրենց հետ այնտեղ էին բերում իրենց նախկին իշխանություններում գոյություն ունեցած տնտեսական հարաբերությունները կարգավորող օրենքները:

Երկրորդ՝ Այդ համակարգը անհնար էր զերծ պահել բյուզանդական կամ արևմտաեվրոպական համակարգերի ազդեցությունից, քանի որ բյուզանդական նախկին տարածքներում է, որ առաձացան հայ համայնքները և ապա հայկական իշխանությունները, իշխանապետությունը և թագավորությունը: Խաչակիրների ազդեցությունը նույնպես անհնար է ժխտել, որը համահունչ է արևմտաեվրոպական ազդեցությանը, քանզի ստեղծվել էին խաչակրաց արշավանքների հետևանքով: Խաչակրաց իշխանությունների պետական կարգերի որոշ ներգործություններ Կիլիկիայի հայկական թագավորության նույն կարգերի վրա համահունչ էին արևմտաեվրոպական կարգերի ներգործությանը, որովհետև ինչպես հայ իշխաններն էին այս տարածքները բերում Բագրատունյաց կառավարման ավանդույթները, այնպես էլ նրանք՝ անգլիական, գերմանական և ֆրանսիական: Չպետք է մոռանալ նաև, որ Լևոն II-ը սերտ հարաբերություններ ստեղծեց խաչակիրների հետ, շփումներ ունեցավ Ֆրիդրիխ Շիկամորուսի և Ռիչարդ Առյուծասրտի հետ, որոնք չէին կարող չթողնել իրենց ազդեցությունը: Բացի այդ, մինչև Գունդստաբլի «Դատաստանագրքի» հանդես գալը (1256թ.) Կիլիկիայում օրենսգրքի հատկանիշ էին ձեռք բերել «Անտիոքի ասիզները»:

Չպետք է անտեսել մի հանգամանք ևս. ավատատիրական հարաբերությունները թե՛ եվրոպական տերություններում, թե՛ Հայաստանում և թե՛ այլուր ունեն ընդհանուր գծեր, որոնք ոչ թե ազդեցության հետևանք էին, այլ տվյալ հասարակական կարգի բնորոշող կողմ: Ազդեցությունը վերաբերում է ոչ թե ամբողջական համակարգին, այլ նրա որոշ բաղադրիչների:

Երկրորդ ենթագլխում բացահայտվում է Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգի էությունը:

Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական հիմքը խարսխված էր արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա: Ընդհանրապես, երբ խոսքը վերաբերում է ֆեոդալական կամ ավատատիրական հասարակարգերում մասնավոր սեփականության իրավունքին, ապա, բնականաբար, մասնավոր սեփականության բուրգի ամենաբարձր աստիճանի վրա գտնվում էր թագավորը կամ արքան: Ընդ որում տնտեսական գործառույթների աստիճանակարգությունը ուղիղ համեմատական էր քաղաքական գործառույթների աստիճանակարգությանը: Այլ խոսքով, ինչպես պատմական Հայաստանի ավատատիրական պետություններում, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորությունում տնտեսական դիրքի առաջնահերթությունը որոշիչ էր քաղաքական դիրքի համար: Տնտեսապես առավել կարողները զբաղեցնում էին կարևորագույն պետական պաշտոնները:

Թագավորին կից գոյություն ուներ այսպես կոչված վերին կամ արքունի ատյանը (curia regis): Բայց թագավորը առանձին իշխանների նկատմամբ ավելի ուժեղ էր և հեղինակավոր, քան Արշակունիները կամ Բագրատունիները:

Կարելի է համաձայնել, որ թագավորի իշխանությունը «ֆեոդալների նկատմամբ ավելի ուժեղ էր և հեղինակավոր, քան նույն այդ դարաշրջանում սյուզերենի իշխանությունը վասալի նկատմամբ խաչակիրների միջավայրում և արևմտյան Եվրոպայում»[15]:

Թագավորը բացարձակ կառավարող չէր տնտեսական առումով:

Կիլիկիայի միապետության տեսակը չէր արտահայտում դասային-ներկայացուցչական միապետությանը բնորոշ հատկանիշներ. թագավորի իշխանությունն ավելին էր, քան դասային-ներկայացուցչական միապետինը, բայց նաև չէր բավարարում բացարձակ միապետության հատկանիշներին ևս, քանզի միապետի կամքը տնտեսական և քաղաքական առումներով անվեհապահորեն բեկումնալի չէր:

Թագավորը՝ որպես պետության գլուխ և բարձրագույն իշխանություն, ուներ մեծ արտոնություններ և օգտվում էր միայն իրավունքներից (ռեգալիաներից):

Կիլիկայի հայկական թագավորությունում տնտեսական կառավարման մեխանիզմները դարձյալ բխում էին սեփականատիրական հարաբերությունների այն ձևերից, որոնց վրա հիմնված էր այդ պետության տնտեսությունը:

Ավատատիրական հասարակարգում մասնավոր սեփականության հիմքով տնտեսության ամենակարևոր բաղադրամասը հողային սեփականությունն էր. գյուղատնտեսության՝ որպես տնտեսության գլխավոր ճյուղը լինելու պայմաններում: Իսկ հողային սեփականության հիերարխիայում առաջին տեղը զբաղեցնում է արքունի սեփականությունը:

Թագավորը կամ արքան, համաձայն ժամանակակիցների վկայության, տնօրինում էր պետության ամբողջ տարածքին, որը կոչվում էր «հայրենի երկիր», թագավորությունը՝ «տանուտիրութիւն Կիլիկիոյ», «սեփական թագաւորութիւն ի հօր յորդիքն» և թագավորը տիրում էր «հայրենի իրավունքով»[16]:

Թագավորը ոչ թե բոլոր հողերիի գերագույն սեփականատերն էր, այլ՝ ամենախոշոր հողատերը: **Խոշոր հողատեր իշխանների կողմից իրենց կալվածքների կառավարման իրավունքն ամենևին կախյալ չէր թագավորից**:

Կիլիկիայի ավատատիրական-իշխանները թագավորի նման իրենց կալվածքներին տիրել են հայրենական և տերունական իրավունքով:

Համաձայն Կ. Գանձակեցու և Սմբատ Գունդստաբլի տեղեկության՝ Կիլիկիայում թագավորին և արքունիքին պատկանող կալվածքները, գավառները, քաղաքները, ամրոցներն ու բերդերը կոչվել են արքունի, տերունի կամ թագավորական (regis) կալվածքներ[17]:

Նույն Սմբատ Գանդստաբլի «Դատաստանագրքի» համաձայն՝ երկրի ամենախոշոր հողատերը թագավորական տունն էր, որին պատկանում էին ոսկու բոլոր հանքերը, անկախ նրանից, թե ում հողատարածքների վրա էին գտնվում, իսկ «արծաթահանքն ի կէս է ընդ երկրին պարոնն եւ ընդ թագաւորն էլ երկաթն ու պղինձն ու կլայեկն՝ յորում երկիր գտնվ այնոր է»[18]:

Այսպիսով՝ թագավորը լինելով ամենամեծ կալվածատերը, նաև տիրում էր այլ կալվածատեր-իշխանների տիրույթներում գտնվող ոսկու հանքերին, իսկ երկաթի, պղնձի և կլայեկի(անագ) հանքերը թողնում էր նրանց:

Սա թագավորի և իշխանների միջև տնտեսական փոխհարաբերությունների ձև էր, որի հիմքում սեփականատիրական հարաբերություններն էին, և որոնք ամրագրված էին

---

[15] Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 251:

[16] Վահրամ Բաբունի, Բան ի յայտնութիւն տեառն և յօծումն Լևոն Գ. արքայի, Երուսաղեմ, 1875, էջ 54:

[17] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 286, Սմբատայ Սպարապետի պատմութիւն, Ս. Ղազար, Մոսկվա, 1856, էջ 109, Սմբատա Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:

[18] Դատաստանագիրք, էջ 13:

Գունդստաբլի օրենսգրքով: Եվ սեփականատիրական առկա ձևերը նա համարում է բնական, հավերժական և անփոփոխ:

Բացի բերդերից և գավառներից՝ արքունի սեփականություն էին համարվում նաև մեծ քաղաքներն ու նավահանգիստները՝ Այասը, Կոռիկոսը, Սիսը, Տարսոնը, Մամեստիան, Ադանան, Անարզաբան և այլն: Սրանք հիշատակվում են թագավորական – regis քաղաքներ:

Ընդհանրացնելով հարկ է շեշտել, որ թագավորը Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության մեջ սեփականատիրական իրավունքով գերակշռում էր կալվածքների, բերդերի, քաղաքի, երկրի ընդերքի մեծ մասի վրա:

Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական աստիճանակարգության մեջ երկրորդ տեղը զբաղեցնում էր իշխանական խոշոր հողատիրությունը: Սեփականատիրական այլ իրավունքների առումով ևս խոշոր իշխանները պահում էին այդ դիրքը:

Խոշոր հողատերերը այստեղ կոչվում էին բերդատերեր կամ պարոններ: Բերդատեր հողատերերը **հայրենատեր** էին, այսինքն՝ իրենց կալվածքը, որը կոչվում էր «հայրենիք», տնօրինում էին ժառանգական սեփականության իրավունքով, որը նաև ընդունված է կոչել «dominum directum» իրավունք:

Ոչ հայրենատեր-բերդատերերը իրենց կալվածքներին տիրում էին պայմանական իրավունքով և ոչ թե ժառանգական սեփականության, քանզի դրանք ստացել էին որպես պարգև զանազան ծառայությունների դիմաց: Այս կարգի կալվածքները կոչվում էին «պարգևականք»:

Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հիերարխիայում կարևորագույն տեղ էր զբաղեցնում եկեղեցապատկան հողատիրությունը:

Այդ հիերարխիայում նրա ունեցած աստիճանը թերևս գտնվում էր հայրենատեր-բերդատերերի աստիճանին կից: Ավելին, հողային սեփականատիրական իրավունքի տեսանկյունից եկեղեցու դիրքերը ավելի անխոցելի էին:

Եկեղեցին տնտեսական գործառույթներ իրականացրել է միայն եկեղեցապատկան կալվածքներում: Այդ կալվածքները բավական մեծ տեղ են զբաղեցրել Կիլիկիայի հայկական թագավորության հողային սեփականությունների համակարգում: Եկեղեցու պետը կամ կաթողիկոսը խոշոր ավատատեր – հողատեր էր և նրա հսկայական կալվածքներից ստացած եկամուտները միայն ու միայն գնում էին նրա գանձարանը:

Եկեղեցապատկան կալվածքների ընդլայնումը տեղի էր ունենում երեք ճանապարհով՝ ա/ իշխանների, ապա թագավորների կողմից կատարված նվիրատվությունների, բ/ հոգևորականների կողմից կալվածքներ գնելու, գ/ այդ կալվածքներին կից գյուղական համայնքների հողերի բռնագրավման:

Եկեղեցու ֆինանսական և տնտեսական հզորացմանը քիչ չէր նպաստում այն հանգամանքը, որ եկեղեցին ապահարկ ինստիտուտ էր, այսինքն՝ նրա գանձած հարկերից չէին փոխանցվում պետական գանձարանին:

Այն հանգամանքը, որ եկեղեցին ապահարկ էր, վկայում է, **որ այդ տնտեսական գործառույթները միայն ու միայն իրականացվում էին ի նպաստ եկեղեցու և չունեին համապետական նկարագիր**: Պետության կողմից տնտեսական կառավարման մեջ եկեղեցին դերակատարություն չուներ, բայց տնտեսապես նա այնքան հզոր էր, նրա կալվածքներն այնքան շատ էին այդ պետության մեջ, որ **բոլոր հիմքերն ունենք պնդելու՝ նրա՝ այդ կառավարման մեջ ունեցած դերի՝ օրենքներով բացառված լինելու հանգամանքի ծիսականության մեջ**: Այստեղ չպետք է անտեսել նաև մեկ այլ հանգամանք, այն է՝ **եկեղեցին հիմնականում իրականացնելով սեփական կալվածքների տնտեսական կառավարումը, տեսականորեն հիմնավորում էր պետության որդեգրած տնտեսական քաղաքականության կամ իշխող տնտեսական համակարգի գոյության անհրաժեշտությունը՝ քարոզելով տիրոջը հնազանդ լինելու հիմնադրույթը**: Սրանով նա փաստորեն լրացնում էր սոցիալ – տնտեսական

հարաբերությունները կարգավորող աշխարհիկ օրենքները՝ բնականաբար ելնելով նախ և առաջ սեփական տնտեսական շահերից:

Ավատատիրական հիերարխիայի ամենացածր աստիճանում գտնվում էին ազատ գյուղացիները, որոնք մանր սեփականատերեր էին: Բնականաբար նրանք գյուղական համայնքի անդամներ էին, որն ուներ իր գործերը տնօրինող համայնքային ժողովը:

Ժողովն իր հերթին ուներ իր ղեկավարը, որը կոչվում էր «գլուխ» կամ «գլխաւորն»: Հողի բաժանումը կատարվում էր հավասար, «ըստ երդերի»: Սահմաններ են դրվել նաև առանձին համայնքների միջև: Սմբատ Գունդստաբլը գրում է. «Չէ պատեհ մենակ զհողերն սինաւռով բաժանել, ինչուր գայ ամէն մարդ ու լցվի»[19]:

Կիլիկիայի հայկական թագավորությունում եղել են գյուղական համայնքներ, որոնք չեն մտել ոչ արքունական, ոչ եկեղեցապատկան, ոչ ավատատիրական կալվածքների մեջ:

Նրանց անդամներն սկզբնական շրջանում ընդհանրապես հարկեր չեն վճարել: Նման գյուղական համայնքի անդամները, այսպիսով, նույնպես «հայրենատեր» էին, քանի որ պահպանում էին իրենց հողատարածքների նկատմամբ սեփականատիրական իրավունքը, որը ժառանգական էր:

Բայց լիարժեքորեն կարելի է պնդել, որ իրենց կալվածքները որպես «հայրենիք» են տնօրինել նաև այն համայնքների բնակիչները, որոնք եղել են հարկատու և բնականաբար տնօրինել ժառանգական սեփականության իրավունքով[20]:

Առհասարակ, երբ խոսք է գնում **գյուղացի** հասկացողության մասին, ապա՝ դրա տակ պետք է միայն ու միայն հասկանալ մանր հողային (և ոչ միայն հողային, նա նաև ուներ որպես սեփականություն իր տնակն ու շարժական գույքը) սեփականատիրոջը:

Եթե գյուղացին ունի հարկային պարտականություն պետության (արքայի) կամ էլ կալվածատիրոջ նկատմամբ, դա ամենևին չի նշանակում, որ նա կարող է չդիտվել որպես «հայրենատեր» գյուղացի: Այսինքն՝ հարկային կախյալությունը ուղիղ համեմատական չէր հայրենազրկմանը:

Իսկ եթե գյուղացին հայրենազրկվում էր, նշանակում է՝ պետք է պայմանականորեն կամ դառնար հողատեր՝ այն ստանալով թագավորից կամ ավատատիրոջից կամ էլ՝ դառնար մշակ, որն ինքնին արդեն ոչ թե գյուղացի է, այլ՝ ծառա:

Վերջնական եզրակացությունն հետևյալն է: Կիլիկիայի հայկական թագավորությունում եղել են.

Առաջին՝ ընդհանրապես ազատ գյուղացիներ, որոնք եղել են նորաստեղծ համայնքների անդամներ, և որոնք հետո, ըստ երևույթին տնտեսությունն ամրապնդելով նոր միայն վճարել են պետական հարկար: Նրանք հայրենատեր գյուղացիներ էին:

Երկրորդ՝ Տնտեսապես կախյալ գյուղացիներ, որոնք լինելով հայրենատեր, հարկ են մուծել հայրենատեր իշխանին և արքունիքին: Հայրենատեր իշխանի կալվածքում գտնվող գյուղացին անմիջապես հարկ չի մուծել թագավորին, քանզի գործում էր «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» ակզբունքը:

Երրորդ՝ Ոչ հայրենատեր գյուղացիներ, որոնք ոչ թե հողին էին ամրացված, այլ նրանց տրված էր հող՝ ժամանակավոր օգտագործման կամ պայմանական իրավունքով: Պատահական չէ, որ ինչպես պայմանական հողատերերը՝ ձիավորները, սրանք էլ կոչվում են լիճ[21]:

Այս ամենի հետ մեկտեղ, պետք է շեշտել, որ քանի որ թագավորին էր պատկանում հողի գերագույն սեփականատիրոջ իրավունքը, ապա նա կարող էր գյուղեր օտարել, բայց ոչ գյուղացիներին հայրենազրկել:

Ճորտ հասկացությունը Կիլիկիայի հայկական թագավորությունում համարժեք չի եղել **գյուղացի** հասկացությանը, և եթե Գունդստաբլը նրան համարում է կախյալ, ապա՝

[19] Դատաստանագիրք, էջ 211:
[20] Տե՛ս Դատաստանագիրք, էջ 129 և էջ 288:
[21] Դատաստանագիրք, էջ 11, էջ 15 և էջ 82:

դրանից ամենևին ենթադրելի չէ, որ նա լիճ ճորտ ասելով հասկանում է կախյալ գյուղացու, ինչպես գտնում է Ս. Բոռնազյանը[22]:

Գյուղացու տնտեսական, պարտավորությունների կատարման մեջ էր թե՛ հողատիրոջ և թե՛ պետության հզորության գաղտնիքը: Ուստի գյուղացու սեփականատիրական իրավունքը անասան էր:

Իսկ ինչպիսի տնտեսական պարտավորություններ էր իրականացնում գյուղացին: Այդ հարցի պատասխանը տալիս են Գունդստաբլի «Դատաստանագրքի» հոդվածները: Այնտեղ դրսևորված են հարկերի գանձման երեք ձևեր՝ աշխատանքային, բնամթերային և դրամական ռենտաները: Սակայն աշխատանքային ռենտան աստիճանաբար վերանում է, և մնում են մյուս երկուսը: Այսպես, Դատաստանագրքում կարդում ենք. «Եւ ի շաբաթն աւր մի պարոնին բանի, եւ այլ աւելի ոչ բնաւ»[23]:

Աշխատանքային ռենտայի համեմատությամբ գերակշռող նշանակություն է տրվում բնամթերայինին, բայց մթերքով տրված հարկերի չափն էլ կարծես շատ չէ: Ահա դրա մասին մեկ վկայություն. «Եւ ածուք ու այսպիսիք ի պարոնին եւ այլ խոտչեք չտայ: Ոչխարն՝ եփ գառն կամ ուլ բերէ տարեկան՝ ի տանէն մէկն մէկն առնու պարոնն»[24]:

Ռենտայի հիմնական տեսակը եկամտհարկն էր: Դատաստանագրքով նախատեսվում էր որպես եկամտահարկ վճարել բոլոր եկամուտների 1/5-ը. «Եւ է ըղորդ հարկուն սահմանն այս, որ՝ զինչ Աստուած տայ հարկատուին, ի ինգէն մէկն է»[25]:

Որպես տնտեսության զարգացման հիմնական ուժ՝ գյուղացիությունը իր համար սահմանված օրենքների չափով պաշտպանված էր:

Արգելվում էր վաշխառուական պարտքի դիմաց բռնագրավել շարժական գույքը՝ եզներն ու ձիերը, քանզի դրանք արտադրության զարգացման հիմնական միջոցներն էին:

Այսպիսով՝ պետությունը հիմնական նպատակներից մեկն էր համարում արտադրության միջոցների օգտագործման կանոնակարգումը, որը կարգելեր գյուղացիական տնտեսության քայքայումը: Նույնիսկ հանուն արտադրության նորմալ պրոցեսի՝ Գունդստաբլը հանդուրժում էր «նաև սեփականության սահմանների խախտում»[26]:

Ուսանելի են և արդիական հնչողություն ունեն ջրօգտագործման կարգավորման օրենքները: Դատաստանագրքով վերացվում են ջրօգտագործման բոլոր արգելքները:

Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգի կայացման և կայունության հիմնական գրավականներից մեկը գյուղացու հետ այնպիսի արտադրատնտեսական հարաբերությունների մշակումն ու կիրառումն է եղել, որպեսզի ամեն կերպ խրախուսվի նրա աշխատանքը, որի արդյունավետությունն ուղիղ համեմատական էր պետության քաղաքական կայունությանն ու հզորությանը:

Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի լիարժեք պատկերը կերտելու համար հարկ է անդրադառնալ արտադրողական մյուս հիմնական ուժին ևս՝ արհեստավորներին, որոնք դուրս էին ավատատիրական աստիճանակարգից, բայց այդ համակարգի կարևորագույն բաղադրամասն էին կազմում:

Այդ կարևորությունը փայլուն է ըմբռնել Գունդստաբլը, որն իր օրենսգրքում օրենսդրական կայուն դաշտ է ստեղծել արհեստավորության համար: Նա գտնում է, որ միայն անասնապահությամբ կամ գյուղատնտեսության այլ ճյուղերով հնարավոր չէ պահել երկիրը, անհրաժեշտ է զարգացնել արհեստները ևս: Նա կարևորում է դարբնի, հյուսնի և քարագործի աշխատանքը, որովհետև դրանք կապված էին զինագործության, երկրի պաշտպանության (պարիսպների և բերդերի շինարարության) հետ: Ահա այդ վկայությունը. «Զամէն ազգ արհեստավոր պատուէցէք, բայց զդարբինն և զհիւսը և

[22] Ս. Վ. Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 243:
[23] Նույն տեղում, էջ 13:
[24] Նույն տեղում:
[25] Նույն տեղում:
[26] «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, 1966, էջ 213:

զքարգործն աւելի: Եւս առաւել զգա առաւել զգրագրերն և զբժիշկերն՝ զի մարդս կու ստածեն»[27]:

Դատաստանագրքից տեղեկանում ենք, որ մեծ մասամբ արհեստավորները աշխատել են պատվերով: Այնտեղ հատուկ հոդված կա[28], որը վերաբերում է արհեստավորների և պատվիրատուների փոխհարաբերություններին:

Գունդստաբլը ձգտել է պատվիրատուի և արհեստավորի միջև տեսնել ներդաշնակ փոխհարաբերություններ, որովհետև պատվիրատուի նկատմամբ պայմանավորվածության խախտման դեպքում կքչանային պատվերները, ինչպես նաև հարկերը, իսկ արդյունքում կնվազեին պետության եկամուտները: Կասկածից վեր է, որ հեղինակը ընկալել է մասնավոր սեփականության վրա հիմնված և դեպի շուկան ուղղված տնտեսական համակարգի էությունը, որտեղ արտադրողների ինքնիշխանության շրջանակները որոշում է սպառողը՝ տվյալ դեպքում պատվիրատուն: Սա վկայություն է այն մասին, որ Կիլիկիայի տնտեսությունում սկսել էին ձևավորվել շուկայական տնտեսակարգին բնորոշ տարրերը:

Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության մեջ կիրառվել է նաև վարձու աշխատանքը: Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքից» ենթադրելի է, որ եղել են վարձու աշխատողների երկու տեսակներ, աշխատողներ, որոնք զուրկ են եղել արտադրության միջոցներից և աշխատողներ, որոնք ունեցել են սեփական արտադրության միջոցները[29]:

Ոչ պակաս հետաքրքիր է, որ Գունդստաբլն իր օրենսգրքով պարտավորեցնում է անկեղծ և բարեկամական փոխհարաբերություններ վարձու մշակների և նրանց վարձած տերերի միջև: Նրա պահանջն է՝ վճարել վարձու աշխատողին համաձայն պայմանավորվածության. «Եւ իրաւունք է, որ զդրած պոմանն եւ զվարձն անպակաս տան իրենց, ու իրենք պարտին, որ իրենց պահքն անսխալ ու աղեկ պահեն»[30]:

Եզրակացությունը մեկն է՝ **Կիլիկիայի հայկական թագավորությունում սոցիալական ցանկացած շերտ, անկախ իր կարգավիճակի առանձնահատկությունից, իր համար սահմանված օրենքների և դրանցից բխող իրավունքների չափով պաշտպանված էր**: Եվ սրանում պետք է նաև որոնել այս պետության տնտեսության բարձր զարգացման կարևորագույն պատճառներից մեկը:

Կիլիկիայի հայկական թագավորությունում բարձր մակարդակի վրա են եղել նաև առևտրի կազմակերպման և ապրանքների գների մակարդակների հարցերը: Դրանք այդ բարձրության վրա է դրել դարձյալ Գունդստաբլը:

«Դատաստանագրքում» հատուկ ուշադրություն է դարձվում նաև չափ ու կշիռների ճիշտ օգտագործման և սահմանված գների պահպանման խնդրին:

Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորությունն ունեցել է բավականին ճկուն տնտեսական համակարգ, որը պայմանավորված էր նախ և առաջ, տնտեսական հարաբերությունների օրենսդրական կարգավորմամբ և, երկրորդ, այն հոգատար քաղաքականությամբ, որը որդեգրել էր պետությունն իր քաղաքացիների նկատմամբ: Եվ այս բացառիկ տնտեսական համակարգով կարելի է պայմանավորել այս պետության ռազմա-քաղաքական հզորությունը, մասնավորապես Լևոն II-ի և Հեթումյանների կառավարման շրջանում:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է **«Կիլիկիայի հայկական թագավորության ինստիտուցիոնալ հիմքերը»,** բաղկացած է երեք ենթագլխից: **Առաջինում** ներկայացվում է արքունիքը՝ որպես գերագույն ինստիտուտ և նրա կառուցվածքը:

Կիլիկիայի հայկական թագավորության՝ որպես միապետական կառավարման տիպի պետության, տնտեսության կառավարման կենսունակությունը պայմանավորված էր նաև այդ համակարգի ինստիտուցիոնալ հիմքերով, որոնք ընդգրկում էին ինչպես

[27] Նույն տեղում, էջ 14:
[28] Տե՛ս նույն տեղում, էջ 146-147:
[29] Դատաստանագիրք, էջ 148:
[30] Նույն տեղում, էջ 173:

հասարակության տնտեսական հարաբերությունների բնագավառը կարգավորող և տնտեսական քաղաքականությունն իրականացնող հաստատությունների ամբողջությունը, այնպես էլ սովորույթներն ու կրոնական-բարոյական նորմերը, ավանդույթները:

Դրանցից առաջինը պետք է առանձնացնել արքունիքը՝ արքայի գլխավորությամբ: Անշուշտ, արքունիքը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համակարգի բուրգի գագաթն էր:

Արքունիքն էր տնտեսական հարաբերությունները կարգավորող և տնտեսական քաղաքականությունն իրականացնող հիմնական կառույցը:

Նրա կառուցվածքն ու էությունը որոշում էր արքան կամ թագավորը:

Թագավորը լիազորված է բարձրագույն իշխանությամբ, նա է դրամ հատողը, քաղաքներից սկսած մնացյալ շինությունների կառուցողը, իսկ այլ իշխանները կարող են կառուցել միայն նրա հրամանով, առանց նրա հրամանի ոչ ոք չի կարող նստել, բացի հայրապետից: Նրա իրավական հիմնավորումներում թագավորի առաջնայնությունը երևում է նաև երկրի ընդերքի հարստությունների բաշխման տեսանկյունից: Այդ մասին կարդում ենք. «Ոսկէհանքն թագվորին է, եւ արծաթահանքն ի կէս է ընդ երկրին պարոնն եւ ընդ թագւորն եւ երկաթն ու պղինձն ու կլայէկն՝ յորում երկիր գտնվի այնոր է»[31]:

Իշխանական մարմինը, որի միջոցով թագավորը որոշում էր բոլոր կարևորագույն հարցերը, դարպասն էր կամ պալատը: Այն հաճախ կոչվել է նաև բարձրագույն վերին արքունի ատյան կամ դիվան՝ (Curiae regis[32]):

Թագավորն իր արքունիքով իրականացնում էր հետևյալ գործառույթները՝ ա) հողային սեփականության ձևերի կարգավորում և նորերի ստեղծում, բ) արտաքին տնտեսական կապերի ստեղծում և վերահսկում, գ) հարկային և մաքսային քաղաքականության իրականացում:

Թագավորը թագավորության տարածքը համարում է «per totam terram meam» (իր ամբողջ տարածքը)[33]:

Այսպիսով՝ թագավորն էր հողի գերագույն սեփականատերը:

Սակայն կարևոր է այն, որ թագավորը, լինելով հողի գերագույն սեփականատերը, ուներ նաև իր արքունական սեփականությունը, իր կալվածքը՝ ժառանգական սեփականության իրավունքով: Ուրեմն ստացվում է, որ ի պաշտոնե նա էր համարվում հողի գերագույն սեփականատերը և ժառանգական էր միայն նրա տոհմական սեփականությունը կամ այն, որը որպես այդպիսի սեփականություն օրենքով հասնում էր թագավորական ընտանիքին:

Թագավորի, որպես ամբողջ հողի տերը լինելու ծիսականության հանգամանքը զուգակցվում էր նրա տնտեսական կառավարման գերակայության հետ: Սա հայեցակարգային մոտեցում է, որը մեր կողմից դրվում է վերլուծության հիմքում:

Արքունիքը, լինելով գլխավոր կառույցը քաղաքական և տնտեսական կառավարման տեսանկյունից, ուներ իր իր ենթակառուցվածքային տարրերը, որոնք ընդունված է կոչել գործակալություններ:

Թագավորի տնտեսական քաղաքականությունն իրականացնող գործակալություններն էին՝

Առաջին՝ պայլություն կամ խնամակալություն: Վերջինիս գործառույթներն էին՝ պետության ղեկավարում կամ թագավորի պարտականությունների ստանձնում, քանի դեռ նա անչափահաս էր, այսինքն՝ ռեգենտի (ժամանակավոր իշխողի) դերակատարություն, իսկ նրա չափահաս լինելու դեպքում խնամակալություն: Կարևոր է մատնանշել նաև այն, որ գահի թափուր մնալու դեպքում, երբ երկրում ծայր էին

[31] Նույն տեղում, էջ 13:
[32] Langlois V., Le trésor des chartes d' Arménie, p. 106.
[33] Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութեան տեառն ու օծումն Լեւոն Գ արքայի, Երուսաղէմ, 1875, էջ 54:

առնում երկպառակչական կռիվներ, նա էր գլխավորում բանակը և հնազանդեցնում էր կենտրոնախույս ձգտումներ ունեցող իշխաններին[34]:

Երկրորդ՝ սեղանապետություն: Այս գործակալությունն ավելի շատ հայտնի էր սինեջալ, սինեշալ և սենեսկալ կամ սենեսկալ հայոց անուններով: Սենեսկալը բավական ազդեցիկ պաշտոնյա էր, քանզի արքունիքի կամ արքայական պալատի կառավարիչն էր, արքունի եկամուտների և ծախսերի տնօրինողն ու հսկողը:

Երրորդ՝ մաքսապետություն: Սա համարվում էր ամենախոշոր գործակալությունը, քանզի վերահսկում էր երկրի մաքսերն ու հարկերը կամ, այլ արտահայտությամբ՝ հարկային և մաքսային քաղաքականության պատասխանատուն էր: Մաքսապետը կոչվում էր պռոքսիմոս կամ պռոքսիմոս:

Այս գործակալության կարևորությունն այն էր, որ մաքսերն էին գլխավոր միջոցները, որոնցով ապահովվում էր պետության եկամուտը, և որոնցով հոգացվում էին ռազմական ծախսերը:

Ահա այս երեք գործակալություններն էին, որ արքունական ինստիտուտում կամ արքունիքում իրականացնում էին տնտեսական քաղաքականության գործառույթներ, կյանքի էին կոչում երկրի տնտեսական քաղաքականությունը՝ արքայի գլխավորությամբ:

Արքունիքի՝ որպես կառավարման գերագույն ինստիտուտի ամբողջական պատկերը կերտելու տեսանկյունից կարևոր է նաև մյուս ենթակառուցվածքային տարրերը ներկայացնելը: Ճշմարիտ է, դրանք ունեին ոչ թե զուտ տնտեսական, այլ քաղաքական, զինվորական և այլ գործառույթներ, բայց ներքոհիշյալ գործակալությունների հետ կազմում էին մեկ ընդհանուր ամբողջություն:

Առաջին՝ սպարապետություն: Սպարապետը կամ գունդստաբլը (կոննետաբլը) ռազմական գերատեսչության ղեկավարն էր: Այս պաշտոնը համապատասխանում էր հունական ստրատելատին կամ ֆրանսիական գեներալիսիմուսին: Գունդստաբլը մեծ կշիռ ուներ երկրում, քանզի պետական կամ արքունական բանակի գլխավոր հրամանատարն էր: Բացի այդ՝ նրան էին ենթարկվում նաև բարոնների կամ պարոնների, այսինքն բերդատեր իշխանների առաջնորդությամբ և դրոշների ներքո հանդես եկող աշխարհազորները պատերազմի ժամանակ:

Գունդստաբլին էր ենթարկվում մարաջախտը, որը բանակի ինտենդենտական ծառայության ղեկավարն էր, այսինքն՝ տնտեսական մատակարարը: Նա կոչվում էր «մարաջախտ թագաւորութեան հայոց»[35]:

Երկրորդ՝ Իշխանաց իշխան կամ պարոնաց պարոն, որը կոչվում էր նաև մեծ իշխան, թագավորի օգնականն էր՝ ազնվականների գործերով:

Երրորդ՝ Ջանցլեր կամ կանցլեր: Սա արքունի քարտուղարության ղեկավարն էր, այլ արտահայտությամբ՝ ատենադպիրը կամ դպրապետը: Բայց եթե հին Հայաստանում դպրապետը վարում էր միայն արքունի գրագրությունը, ապա այստեղ ջանցլերը վարում էր նաև արտաքին գործերը, որոնք, հասկանալի է, որ պետք է ունենային տնտեսական և քաղաքական ուղղվածություն:

Այսպիսով՝ Առաջին՝ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքը արքունիքն էր՝ արքայի կամ թագավորի գլխավորությամբ:

Երկրորդ՝ Երկրի տնտեսական քաղաքականության գլխավոր դեմքը թագավորն էր, որն արքունիքի միջոցով իրականացնում էր տնտեսական քաղաքականությունը:

Երրորդ՝ Արքունիքն ուներ գործակալություններ, որոնք կարելի է համարել ենթակառույցային տարրեր տնտեսությունը կառավարող գլխավոր համակարգում:

---

[34] L. Խաչիկյան, Ժդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 193 - 194:
[35] Սամուէլ Անեցի, նշվ. աշխ., էջ 209 - 210:

Չորրորդ՝ Արքունիքը տնտեսական ինստիտուտների բուրգի գագաթն էր, որից աստիճանաբար, վերևից ներքև ճյուղավորվում էին տեղական նշանակությամբ կառավարման ինստիտուտները:

Երկրորդ ենթագլուխը վերաբերում է տեղական կառավարման ինստիտուտներին: Այնտեղ լուսաբանվում է, թե ինչպիսի տեղ էին զբաղեցնում այս թագավորության տնտեսության մեջ եկեղեցին և իշխանական դոմենը: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ ինչ-որ տեղ արդեն պարզ է, որ դրանք տեղական կառավարման տնտեսական ինստիտուտներ էին՝ որպես այդ կառավարման սուբյեկտ ենթարկելով այն օրենքներին, որոնք գործում էին համընդհանուր տնտեսության կազմակերպման և ապա՝ կառավարման համար:

Եկեղեցին հոգևոր և վարչական ինստիտուտ էր, կառույց, որը, ի տարբերություն բերդատեր, հայրենատեր կամ հայրենատեր իշխանների, ապահարկ էր և սեփական կալվածքներից ստացած եկամուտներն ինքնուրույն էր տնօրինում: Ի տարբերություն հայկական քրիստոնեական ժամանակաշրջանի թագավորությունների (Արշակունիների, Բագրատունիների, Վասպուրականի, Արծրունյաց)՝ **Կիլիկիայի հայկական թագավորությունում հայոց եկեղեցին համապետական նշանակության կառույց էր միայն հավատի և բարոյականության խնդիրների առումով, իսկ քաղաքական և տնտեսական բնագավառներում զուրկ էր նման հնարավորությունից**:

Կիլիկիայի հայկական թագավորությունում կաթողիկոսը զրկված էր մեծ դատավորի կամ **մեծ դատավորություն** կոչված գործակալության ղեկավարի իր պաշտոնից: Արդյունքում **նա մնում էր հոգևոր և բարոյական քարոզիչ ու վանքապատկան կալվածքների կառավարիչ**: Այսինքն՝ նա տնտեսական միանգամայն ինքնուրույն ինստիտուտ էր:

Իսկ ինչ վերաբերում է արքունական դոմենին և իշխանական հողերին, ապա դրանց տերերը միաժամանակ համարվել են վարչական ղեկավարներ: Վարչական առումով պետությունը բաժանված էր գավառների, որոնց թիվը հասել է երեսունի: Մի քանի գավառները կազմել են աշխարհներ:

Ինչպես արքան ամբողջ պետության մեջ զբաղեցնում էր բուրգի գագաթնակետը, այնպես էլ կաթողիկոսն էր հոգևոր հիերարխիայի բարձրակետը: Այնուհետև, ըստ հոգևոր և տնտեսական դիրքերի հաջորդականության, եկել են արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները:

Պետք է շեշտել մի կարևորագույն հանգամանք, այն է՝ **հոգևոր դիրքերի առաջնահերթությունը որոշիչ է եղել տնտեսական դիրքերի համար, այսինքն՝ ինչքան բարձրաստիճան են եղել որպես հոգևորականներ, այնքան բարձր տնտեսական կարգավիճակ են զբաղեցրել**:

Եկեղեցին պետք է համարել տեղական նշանակության տնտեսական կառավարող մարմին և քաղաքական լծակներից զերծ համապետական նշանակության հոգևոր մարմին:

Ճշմարիտ է, եղել է նաև, որ հոգևորականները նշանակվել են նաև քաղաքական պաշտոններում (օրինակ՝ ջանցլերի, դեսպանների և այլն), **բայց դա նշանակում էր ոչ թե եկեղեցու, այլ աշխարհիկ գործերով զբաղվող որևէ եկեղեցականի մասնակցություն պետության կառավարմանը**:

Վերջնական հետևությունն այս է՝ եկեղեցու սպասավորները ավելի շատ հիշեցրել են վարչական ղեկավարների, վանքապատկան տնտեսության կառավարողների, քան թե ավատատերերի:

Վարչա-տարածքային առումով Կիլիկիայի հայկական թագավորությունը բաժանված էր գավառների, որոնք կազմում էին աշխարհներ: Այս աշխարհները հաճախ կոչվել են պարոնություններ: Եղել է նա մեկ կոմսություն, որը կազմել է Կոռիկոսի նահանգը:

Աշխարհների և կոմսության միջև մտած գավառները եղել են իշխանի և կոմսի վարչական կառավարման տարածքը: Բնականաբար, շատ այլ գավառներ մտել են արքունական կալվածքի մեջ: Թագավորն իրեն պատկանող գավառների համար

նշանակել է կառավարիչներ: Իսկ ինչ վերաբերում է աշխարհներին, ապա դրանք ղեկավարել են պարոնները, ընդ որում ելնելով իրենց սեփականատիրական իրավունքներից: Իշխանական կալվածքն իրենից ներկայացնում էր տեղական կառավարման յուրօրինակ ինստիտուտ. պարոնները վարչա-տնտեսական, ինչպես նաև դատական իշխանության մարմնավորողներ էին:

Կարելի է այն եզրակացությունն առաջ մղել, որ հողատեր իշխանները (կլինեն դրանք հայրենատեր, թե ձիավորները, որոնք իրենց կալվածքներին տիրում էին ցմահ սեփականության իրավունքով) հանդես էին գալիս իրենց համար սահմանված տնտեսական հարաբերությունները կարգավորող վարչական և դատական իշխանություններ միաժամանակ:

Տեղական կառավարման հաջորդ ինստիտուտները քաղաքային ինքնավարության մարմիններն էին և ոչ թե քաղաքները, ինչպես գրում է Ս. Բոռնազյանը[36]:

Բնականաբար, գլխավոր քաղաքները մտնում էին թագավորական դոմենի մեջ և ենթարկվում էին արքունիքի կառավարման կենտրոնական ապարատին (Սիսը, Տարսոնը, Ադանան, Մամեստիան, Անարզուբան, Այասը, Կոռիկոսը):

Քաղաքներում կենտրոնական կառավարության կամ թագավորի ներկայացուցիչ-ները եղել են մի քանիսը՝ շհիտենները, որոնք կապիտանների հետ մաքսատան ղեկավարներն էին, մուխթասիբները, որոնք հարկահավաքներն էին, երեսփոխանները, որոնք քաղաքի կառավարիչներն էին[37]:

Իսկ ինքնավարության մարմինը դասային խորհուրդն էր, որը ղեկավարում էր քաղաքագլուխը: Այս մարմնի մեջ մտնում էին քաղաքային բնակչության՝ վաճառա-կանության և արհեստավորների ներկայացուցիչներ:

Տեղական կառավարման ամենափոքր օղակը գյուղական համայնքն էր, որն ուներ կարգադրիչ մարմին՝ հանձին ավագների խորհրդի: Քանի որ գյուղական համայնքները միաժամանակ եկեղեցական ծխեր էին, ապա՝ այս երկուսը միավորված էին մեկ ինքնակառավարող միավորի մեջ: Ավագների խորհուրդը իրականացնում էր հետևյալ գործառույթները. վարում էր տաճարների կառուցման ծախսերը, կատարում էր տուրքերի գանձում՝ հօգուտ եկեղեցու, հոգևորականության, հողատիրոջ և պետության, ինչպես նաև քննում էր մանր քրեական և քաղաքացիական վեճերը[38]:

Երրորդ ենթագլուխը նվիրված է դատական ինստիտուտներին և դրանց տնտե-սական գործառույթներին:

Դատավարական ինստիտուտը տնտեսական համակարգից դուրս էր, բայց առանց նրա անհնար է պատկերացնել այդ համակարգի կայացումը, քանզի դատարաններն են իրականացնում նաև տնտեսական քաղաքականության վերահսկողության գործառույթը, առանց որի անհիրագործելի նախագիծ կարող է մնալ տնտեսական որևէ համակարգի ձևավորմանն ու զարգացմանը միտված ցանկացած ծրագիր:

Այնքանով, որքանով դատաիրավական համակարգը նաև արտադրատնտեսական հարաբերությունները կարգավորող կարևորագույն օղակ է, այդքանով էլ ինստիտուցիոնալ կառույց է նաև տնտեսական համակարգում:

Վերին կամ Մեծ Դարպասը կամ արքունի դիվանը, ինչպես նշեցինք, գերագույն թագավորական դատարան էր, ուստի և նրա նախագահը թագավորն էր:

Սսի արքեպիսկոպոսական դատարանը հիմնականում քննել է հոգևորականների գործերը, ինչպես նաև քրիստոնյա և այլադավան անձանց միջև ծագած վեճերն ու հանցագործությունները: Այն նախագահել է Սսի արքեպիսկոպոսը:

Եկեղեցու կարգավիճակի պետականորեն և օրենսդրությամբ սահմանված լինելու պայմաններում, երբ նա իրենից չէր ներկայացնում համապետական նշանակության տնտեսական և քաղաքական կառույց և այդպիսին էր սոսկ հոգևոր-բարոյական

---

[36] Ս. Վ. Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 83:
[37] Ա. Գ. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 169-170:
[38] Ա. Գ. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 169:

տեսանկյունից, դատաիրավական հարցերի համար նույնպես ստեղծվել էր առանձին ինստիտուտ:

Մեծ իշխանի կամ իշխանաց իշխանի դատարանը եղել է առաջին ատյանի դատարան և քննել է մյուս իշխանների (որոնք թագավորի վասալները չէին) միջև ծագած վեճերը և հանցագործությունները[39]: Իսկ սենյորական, պարոնական կամ գավառական դատարանները եղել են տեղական դատարաններ, որոնք քննել են սենյորի և վասալի, ինչպես նաև բնակչության այլ շերտերի (այդ թվում գյուղացիների) միջև եղած տարաբնույթ վեճերը:

Հիշյալ դատարաններից բացի գործել են նաև եկեղեցական ատյաններ՝ **բնականաբար եկեղեցական թեմերում**:

Հիշյալ դատարաններից բացի, օտար առևտրականներն ու արհեստավորները նույնպես ունեցել են իրենց դատարանները՝ Սսում, Տարսոնում, Մամեստիայում և Այասում: Դրա դիմաց նրանք պարտավոր էին հավատարիմ մնալ թագավորին:

Բավական հետաքրքիր է այն հանգամանքը, որ դատարաններն ունեցել են կոլեգիալ բնույթ՝ կազմված նախագահից և ատենակալներից (երկու կամ ավելի): Ուշագրավ է, որ դատավարությունն անվճար էր:

Այսպիսով՝ Կիլիկիայի հայկական թագավորությունն ունեցել է բավական կուռ դատական համակարգ՝ ձևավորված այն հիերարխիկ կառուցվածքին համապատասխան, որը գոյություն ուներ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական համակարգում: Նմանաբնույթ դատավարական ինստիտուտների առկայությամբ էր պայմանավորված Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության երկարատև հզորությունը:

Երրորդ գլխում, որը վերնագրել ենք **«Կիլիկիայի հայկական թագավորության և Հայաստանի Հանրապետության տնտեսական կառավարման մեխանիզմների համեմատական քննություն»,** փորձել ենք ներկայացնել այս երկու տերությունների տնտեսությունները համեմատության մեջ:

Հայաստանի 3-րդ Հանրապետությունն իր՝ արդեն քսանամյակից ավելի գոյության ընթացքում որդեգրել է մի տնտեսական քաղաքականություն, որի նպատակը ինքնաոչնչացնող խորհրդային տնտեսական համակարգի փոխարեն շուկայական տնտեսության ձևավորումն էր, առանց որի դժվար է պատկերացնել որևէ տնտեսության առաջընթացը: Ազատ շուկայական հարաբերությունները ենթադրում են ազատ մրցակցություն, որը տնտեսության զարգացման գլխավոր պայմանն է:

Ձանց առնելով այն խնդիրը, թե ՀՀ-ում ազատ մրցակցությունն ինչ աստիճանի է խրախուսվում, մենք նպատակահարմար ենք համարել Կիլիկիայի Հայկական թագավորության շրջանում տնտեսական հիմնահարցերի լուծումների մեջ գտնել այն ուղիները, որոնք կիրառելի կարող են լինել նաև այսօրվա համար:

Կարող է հարց առաջանալ, թե ինչ ուսանելի կողմեր կարող է ունենալ միապետական կառավարման տիպի պետության տնտեսական համակարգը՝ այն էլ մի քանի դար առաջ գոյություն ունեցած, այսօրվա մեր հանրապետական կառավարման տիպի պետության համար, մանավանդ որ վաղուց իրենց դարն ապրել են ավատատիրական սեփականատիրական հարաբերությունները: Սակայն, անմիջապես շեշտենք, որ **պետության՝ տնտեսության մեջ ունեցած կարգավորիչ դեր ունենալու հանգամանքն ամենևին չի փոխվում սեփականատիրական հարաբերությունների փոփոխմանը զուգընթաց, այլ կարող են փոխվել միայն այդ դերի իրականացման մեխանիզմները: Երկրորդ՝ հանրապետական կառավարման տիպի պետություններում էլ, եթե նույնիսկ արտադրողական հիմնական ուժը գյուղացիությունն է, ապա տնտեսության զարգացման առումով ուսանելի դասեր կարելի է քաղել նաև միջնադարյան ավատատիրական հարաբերությունների վրա հիմնված միապետություններից, մանավանդ, երբ խոսքը այնպիսի նման պետության մասին է, ինչպիսին Կիլիկիայի թա-**

[39] Ա. Գ. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 175:

գավորությունն է, որն ուներ ճկուն տնտեսական համակարգ, և որը նրա քաղաքական կայունության, իսկ Հեթումյանների օրոք նաև հզորության գլխավոր գրավականն էր:

Ցանկացած պետություն, որն ընտրում է տնտեսական բարեփոխումների ուղի, դրանց իրականացման ճանապարհին պետք է անպայման պահի տնտեսության այն ոլորտները, որոնք ունեին ռազմավարական և անվտանգության նշանակություն:

Հակառակ դեպքում խիստ դժվար կլինի որևէ պետության տնտեսական և այստեղից էլ՝ քաղաքական և ռազմական հզորության ապահովումը, մանավանդ, եթե նա չի պահպանում ա) կապը և հեռահաղորդակցությունը, բ) երկրի ընդերքը, գ) վառելիքաէներգետիկ համակարգը, պետական խիստ վերահսկողության տակ չի պահում ա) սննդարդյունաբերության կամ սննդի ներմուծման, բ) ազգային անվտանգությանը միտված արդյունաբերական ձեռնարկությունները:

Եթե Կիլիկիայի թագավորությունում ցամաքային և ծովային ուղիները արքայի սեփականությունը չլինեին, արքունական կալվածքները չընդգրկեին այն տարանցիկ ուղիները, որոնցով ձգվում էին առևտրական քարավանները և արքունիքին չպատկանեին նավահանգստային քաղաքները, ապա պետությունը կզրկվեր իր հիմնական եկամուտների մեծ մասից, և կդադարեր ուժեղ տնտեսությամբ ռազմունակ քաղաքական ուժ լինելուց, այլապես, եթե ընդերքի հարստությունները մեծ մասամբ չպատկանեին թագավորին կամ պետությանը, ապա կհարստանային ավատատերերը, ինչը կնպաստեր նրանց կենտրոնախույս ձգտումների իրականացմանը:

Համեմատության համար շեշտենք, որ այսօր ՀՀ-ում հիշատակած բոլոր ոլորտները, թերևս բացի ցամաքային ուղիներից, մասնավոր սեփականությունն են հաճախ այլ պետության, որը չի բխում իր անվտանգության շահերից: Ճիշտ է, օտարից սեփականացված արտադրության միջոցների կամ էներգետիկ համակարգի դիմաց նա հարկեր է գանձում, ունի եկամուտների իր մասնաբաժինը, բայց, կարծում ենք, որ ճիշտը դրանց՝ որպես պետական սեփականության պահպանումն էր:

Հայաստանի անկախության հռչակումից հետո պետական սեփականության իրավունքն աստիճանաբար սահմանափակվեց, ապա դադարեց գոյություն ունենալուց երկրի համար կարևորագույն նշանակության բնագավառների վրա:

Արդեն 1990 թվականի սեպտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքով Հայաստանում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց նրա սեփականությունը[40]:

Նույն թվականի հոկտեմբերի 31-ին ընդունվում է Հայաստանի Հանրապետության սեփականության մասին օրենքը[41]:

Արդեն 1994-95 թթ.-ին ՀՀ-ում սեփականաշնորհվում է մոտ 800 արդյունաբերական ձեռնարկություն[42]:

Այս ձեռնարկը տանում էր տնտեսության մեջ պետության տնտեսական կառավարման դերի նվազմանը:

Պետական խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհմանը պետք է նախորդեր ներդրողների ներգրավումը և տվյալ ձեռնարկությունը նրան սեփականաշնորհելը, որի դեպքում այն կարող էր կարճատև դադարից հետո աշխատել: Բայց ցավոք, ներդրումների անտեսումը և առանց դրա ձեռնարկությունների մասնավորեցումից հետո այդ նույն ձեռնարկությունները վերածվեցին անշարժ գույքի՝ արդյունքում կաթվածահար անելով երկրի տնտեսությունը:

Հայաստանում, չնչին գնով (800 000 ԱՄՆ դոլար) վաճառվել է տնտեսության ողնաշարը հանդիսացող ձեռնարկությունների մեծ մասը:

---

[40] Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 163, գ. 341, թ.3:

[41] Նույն տեղում, ց. 165, գ. 259, թ. 1, 2:

[42] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1995թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 1996, էջ 59-60:

Փաստորեն, սեփականաշնորման ընթացքում անխտիր ապապետականացվեցին մեր հիշատակած ազգային-անվտանգության նշանակության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին հանքարդյունաբերությունը, սև և գունավոր մետաղահանքերի շահագործման նպատակով ստեղծված ծանր արդյունաբերական, ինչպես նաև՝ սննդի ձեռնարկությունները, իսկ ավելի ուշ՝ նաև էներգետիկ համակարգի զգալի մասը:

Կիլիկիայի հայկական թագավորությունում, բնականաբար, խոշոր տնտեսավարող սուբյեկտները ավատատեր իշխաններն էին, բայց նրանց և պետության տնտեսական փոխհարաբերությունները կարգավորող տեսությունները հիմնականում պետք է մնային նույնը: Եվ դա առաջին հերթին վերաբերում էր տնտեսության մեջ պետության մենաշնորհներին:

Առաջին կարևորագույն և ուսանելի կողմը պետք է համարել այն, **որ պետությունը, որն ինչ-որ տեղ համահունչ էր *թագավոր* հասկացությանը, որպես արքունի սեփականություն էր համարում երկրի ընդերքը կամ այդ ընդերքի այն հարստությունը, որի մասնավորեցումը պետությանը կամ ժողովրդին զրկելու էր ազգային անվտանգության մի կարևորագույն երաշխիքից**: **Բայց այստեղ կարևոր է այն, որ թագավորի սեփականությունը պետության սեփականությունն էր, և թագավորի սեփականության գերակայությունը համահունչ էր պետական սեփականության գերակայությանը**:

Իսկ սա նշանակում է, որ պետության հարստությունը չի տրվել մասնավորին, պահպանվել է արքունական սեփականության իրավունքը երկրի հարստության նկատմամբ, որը նրա հզորության գրավականն է:

Արտադրության գլխավոր միջոցը հողն էր, որը պատկանում էր թագավորին: Ինչպես արդեն նշել ենք, պետության ամբողջ տարածքը համարվում էր թագավորին պատկանող «հայրենի հող»[43]:

Կիլիկիայում հիմնական արտադրության միջոցը՝ հողը, համարվում էր արքունի սեփականություն՝ անկախ դրանց՝ այլ իշխանների պատկանելության հանգամանքից:

Հայաստանի Հանրապետությունում քանի որ գերիշխող դիրք է գրավում արտադ-րության միջոցների մասնավոր սեփականությունը, նշանակում է, որ պետության դերը երկրորդական է ապրանքների արտահանման տեսանկյունից:

Ապրանքների ներմուծման մենաշնորհներ ունեցողներին էլ ամենևին ձեռնտու չէ տեղական արտադրության զարգացումը, քանզի դրանով ավելանում է նրանց հարկային բեռը: Արդյունքում ստացվում է, որ մեր երկրի արտահանման ծավալները խիստ զիջում են ապրանքների ներկրման ծավալներին:

Կիլիկիայի հայկական թագավորությունում, ապրանքների արտահանման և ներմուծման գործառույթները գլխավորապես պատկանում էին արքունիքին կամ պետությանը:

Քաղաքներում կուտակվող առևտրի, օտարերկրացիներից գանձված մաքսերի, արհեստավորների վճարելիք հարկերի, մի խոսքով առևտրա-տնտեսական ողջ հարաբերությունների կարգավորման մենաշնորհը պատկանում էր թագավորին կամ պետությանը:

Կիլիկիայի հայկական թագավորությունում երկրի համար կարևորագույն նշանա-կության քաղաքները, արտաքին առևտրի կազմակերպումը, տարանցիկ ուղիների հսկումը իսկապես պետության մենաշնորհն էր:

Թեպետ անհրաժեշտ փաստերը բացակայում են, բայց պետք է ենթադրել, **որ թագավորական տունը քանի որ ժառանգաբար էր տնօրինում իշխանությունը, ապա պետության և թագավորի գանձարանները համատեղ էին**:

Երբ ՀՀ-ում իրականացված և իրականացվող բարեփոխումները դիտարկում ենք արտադրողական հիմնական ուժերին խրախուսելու, նրանց արտադրական գործունեությանն աջակցելու տեսանկյունից՝ դրանք համեմատության մեջ դնելով

[43] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խ. Խաչիկյան, Երևան, 1956, էջ 504:

Կիլիկիայի հայկական թագավորությունում իրականացվող քաղաքականության հետ, համոզվում ենք, որ այսօրվա հեռավորությունից դարձյալ սովորելու շատ բան կարող ենք գտնել ՀՀ-ում տնտեսական հիմնախնդիրների լուծման ճանապարհին:

Խորհրդային պլանային տնտեսական համակարգի կործանումից հետո, կշռադատված կառուցվածքային քաղաքականություն չլինելու պատճառով ՀՀ տնտեսության մեջ արդյունաբերությունը կորցրեց իր առաջատար դերը: Մինչև մենաշնորհների ձևավորումը, որը մեծ մասամբ վերաբերում է առևտրի ոլորտին, տնտեսության հիմնական ճյուղը դարձավ գյուղատնտեսական ոլորտը՝ իր նվազագույն արտադրողականությամբ:

Հարկ է շեշտել, որ սեփականաշնորհումը Հայաստանում սկսվեց հենց գյուղատնտեսական ոլորտից՝ 1991թ.-ից:

Սեփականաշնորհման արդյունքում հողի սեփականատեր են դառնում գրեթե բոլոր գյուղացիները: Սրանով գյուղում ավարտվեց պլանային տնտեսությունը, և գյուղացին իր տնտեսությունը փորձեց ստեղծել իր ցանկությամբ՝ առանց իշխանությունների ուղղորդման: Արդյունքում՝ 1990-ական թթ.-ի սկզբին գյուղատնտեսական արտադրությունը զերծ մնաց այն ճգնաժամից, ինչը խորությամբ ընդգրկեց արդյունաբերությունը: ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը ցույց տվեց աճի միտում: Համաձայն վիճակագրական տվյալների՝ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը ամենաբարձրը եղել է 1995-ին և 3,8%-ով գերազանցել է արդյունաբերության տեսակարար կշռին[44]:

Գյուղատնտեսության զարգացման այս միտումները կարող էին գյուղում կտրուկ շրջադարձի հանգեցնել, եթե գյուղը դառնար պետության մշտական հոգածության առարկա, բարենպաստ պայմաններ ստեղծվեին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման համար: Սակայն, այս ամենն անտեսվեց, և գյուղատնտեսությունը, տակավին ոտքի չկանգնած, դեպի անկում գլորվեց:

Գյուղատնտեսության անկմանը քիչ չնպաստեց նաև այն հանգամանքը, որ արդյունաբերական ձեռնարկությունները, որոնց արտադրանքը հիմնված էր գյուղմթերքների վրա, ինչը լրացուցիչ խթան էր գյուղացիների կողմից տնտեսություններ ստեղծելու համար, դադարեցին լիարժեք գործելուց:

Մյուս կարևոր պայմանն էլ, ըստ մեզ, այն էր, որ քաղաքային բնակչության ճնշող մեծամասնության գործազրկության պայմաններում գյուղացին քաղաքում չէր գտնում իր ապրանքի իրացման շուկան: Ոչ վճարունակ քաղաքաբնակչության մի մասը իր գոյությունը պահպանելու համար տեղափոխվեց գյուղ՝ զբաղվելու այն կենսական ապրանքների արտադրությամբ, որոնք հազիվ բավարարում էին գյուղացուն և դուրս չէին բերվում շուկա:

Հատկապես անտեսվեց այն հանգամանքը, որ գյուղատնտեսական նախկին ձեռնարկությունների լուծարումը բոլոր գոտիներում իրագործվեց միակերպ, առանց տեղական պայմանների հաշվառման, առանց փորձնական միջոցառումներով սեփականաշնորհման արդյունքները ճշտելու:

Եվ վերջապես, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորները ավելի մանրացվեցին:

Կիլիկիայի հայկական թագավորությունում նոր ձևավորված համայնքները չեն մտել ո՛չ արքունական, ո՛չ եկեղեցապատկան և ո՛չ էլ իշխանական կալվածքների մեջ: **Փաստորեն այդ համայնքների անդամները սկզբնական շրջանում հարկեր չեն վճարել**: Եվ սա խթան է եղել գյուղացու տնտեսության ձևավորման համար: **Գյուղացիական մասնավոր տնտեսությունը մինչև իր աշխատանքի արդյունավետության բավարար պահի հասունացումը եղել է հարկերից ազատ, որը գյուղատնտեսության զարգացման**

[44] ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, ՀՀ տնտեսության հիմնական բնութագիրը (ըստ 1991-1999 թթ. սոցիալ-տնտեսական միտումների), Երևան, 2000, էջ 4:

ամենակարևոր պայմաններից է, քանզի եթե տնտեսության ստեղծումից ի վեր գյուղացին հարկեր վճարեր, կխրվեր պարտքերի մեջ, նրա տնտեսությունը չէր կայանա, որից կտուժեր երկրի տնտեսությունը:

Գյուղացու նկատմամբ այս կարևորագույն սկզբունքը չկիրառվեց Հայաստանի Հանրապետությունում:

Եթե համեմատելու լինենք Հայաստանի Հանրապետության և Կիլիկիայի հայկական թագավորության գյուղացիության կարգավիճակը, ապա պետք է արձանագրենք հետևյալ պարզ ճշմարտությունը: **Հայաստանի Հանրապետությունում օրենքի առաջ հավասար են բոլորը՝ անկախ սոցիալական կարգավիճակից կամ որևէ սոցիալական շերտի պատկանելիությունից, իսկ Կիլիկիայի հայկական թագավորությունում թեպետ գյուղացին կազմում էր ավատատիրական բուրգի ամենացածր աստիճանը**, բայց սա տեսականորեն, իսկ գործնականում **Կիլիկիայի հայկական թագավորությունում ամեն հնարավորություն ընձեռվում էր գյուղացիական տնտեսությունների զարգացման համար:**

Կիլիկիայի հայկական թագավորությունում կար այն ըմբռնումը, **որ գյուղացու տնտեսական պարտավորությունների կատարման մեջ էր օրենքով պաշտպանված հողատիրոջ և պետության հզորության գաղտնիքը**:

Գունդստաբլի համար ընկալելի է եղել մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսական համակարգի էությունը, որտեղ արտադրողների ինքնիշխանության չափը որոշել է սպառողը, այսինքն պատվիրատուն: Սա շատ կարևոր հանգամանք է, որ պետք է ընկալելի լինի նաև մեր ժամանակների համար:

Արդիական նշանակությունը չի կորցրել նաև Կիլիկյան Հայաստանի՝ գների կարգավորման, ինչպես նաև չափերի ու կշիռների սահմանման պրակտիկան: Դրանց հիմքում դրված է եղել արդարությունը:

Ամփոփենք: Կիլիկիայի հայկական թագավորությունից մնացել են նաև ներկա Հայաստանի Հանրապետության համար կիրառելի և արդիականությունը չկորցրած դրույթներ:

Առաջին՝ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության կարևորագույն ոլորտները պատկանում էին պետությանը, արքունիքին կամ թագավորին: Նրան էր պատկանում արտաքին առևտրի, արտահանման և ներմուծման մենաշնորհը: Հասկանալի պատճառներով պարզ կրկնօրինակումն անիրագործելի է և անարդյունք: Պետության տնտեսական քաղաքականության թիրախն այս ոլորտներում պետք է դառնա ազգային տնտեսության մեծացմանն ուղղված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը: Վերջինս պետք է համապատասխանեցվի առաջին հերթին ՀՀ տնտեսական շահերի իրացմանը և ապա միջազգային կազմակերպությունների և նոր միայն օտար երկրների հանձնարարականներին:

Երկրորդ՝ պետությունը ճիշտ քաղաքականությունն էր որդեգրել արտադրողական հիմնական ուժերի՝ գյուղացիների և արհեստավորների նկատմամբ. նորաստեղծ տնտեսություններին ժամանակավորապես ազատում էր հարկերից, մինչև դրանց կայացումը, ապա՝ նոր սահմանում էր հարկեր, սակայն այն չափով, որ չխաթարվեր այդ տնտեսությունների կենսունակությունը:

Երրորդ՝ անկախ սոցիալական տարբերությունից, ավատատիրական աստիճանակարգության մեջ զբաղեցրած տեղից, հասարակության յուրաքանչյուր շերտ իր համար սահմանված օրենքների և իրավունքների չափով պաշտպանված էր և նրա համար ընձեռված էր աշխատելու և արարելու լայն հնարավորություն:

Չորրորդ՝ այս ամենի հետևանքով պետությունն ուներ ճկուն տնտեսական մեխանիզմ, հարուստ գանձարան, որը բանակի հզորության և նրա քաղաքական անկախության պահպանման գլխավոր գրավականն էր:

Ահա այս ամենով էր պայմանավորված Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կառավարման արդյունավետությունը:

Եզրակացություններում կանոնակարգված տեսքով ի մի են բերված այն բոլոր հայեցակարգերը, որոնք հիմնավորվել են ատենախոսության շարադրման ընթացքում, հիմնականում հանգել եմ հետևյալին.

Առաջին: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգը հիմնականում կրել է հայկական նախորդ, մասնավորապես Արշակունիների և Բագրատունիների նույն համակարգի ազդեցությունը, այլ խոսքով՝ բխել է տնտեսական հարաբերությունների հայկական ավանդույթներից, քանի որ նրան նախորդած իշխանությունը ձևավորվել էր Հայաստանից արտագաղթած կամ աքսորված իշխանների կողմից, որոնք իրենց հետ Կիլիկիա էին տարել Հայաստանում գոյություն ունեցած տնտեսական հարաբերությունների կարգավորման սկզբունքները:

Երկրորդ: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգը կրել է նաև բյուզանդական և արևմտաեվրոպական համակարգերի ազդեցությունը, քանի որ հայկական իշխանություններն առաջացել էին բյուզանդական կայսրության նախկին տարածքներում: Արևմտաեվրոպական ազդեցությունն էլ պետք է պայմանավորել խաչակրաց արշավանքներով, քանի որ այդ արշավանքների արդյունքում Կիլիկիա էին բերվում տնտեսական կառավարման անգլիական, գերմանական և ֆրանսիական առանձնահատկությունները: Բացի այդ, ավատատիրական հարաբերությունները թե՛ Եվրոպական պետություններում, թե՛ Հայաստանում և թե՛ այլուր ունեն ընդհանուր գծեր, որոնք ոչ թե ազդեցության հետևանք էին, այլ տվյալ հասարակական կարգի բնորոշ կողմ:

Երրորդ: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգը գլխավորապես հիմնված է եղել մասնավոր սեփականատիրական իրավունքի վրա, իսկ սեփականատիրության առումով գերակշռողը հողային սեփականությունն էր: Որպես հողային սեփականատեր՝ գերիշխող իրավունքը տրված էր արքունիքին:

Չորրորդ: Թագավորը թեև օրենքով համարվում էր հողի գերագույն սեփականատեր, բայց իրականում հայրենատեր բերդատերերի նկատմամբ նրա իրավունքները բացարձակ չէին: Նրա հողային սեփականության իրավունքը բացարձակ էր միայն արքունի տիրույթներում:

Հինգերորդ: Համապետական տնտեսական կառավարման մեջ եկեղեցին չի ունեցել որևէ դերակատարություն: Այն եղել է միայն եկեղեցապատկան կալվածքների կառավարման իրականացնողը, իսկ այդ կալվածքները ոչ թե հոգևորականների, այլ եկեղեցու ժառանգական սեփականությունն էին:

Վեցերորդ: Արտադրողական հիմնական ուժը համարվում էր գյուղացիությունը, որն ապրում էր գյուղական համայքներով, և յուրաքանչյուր գյուղացի համարվում էր հայրենատեր՝ ժառանգական սեփականության իրավունքով: Կարևոր է, որ գյուղատնտեսական պարտավորությունների կատարման մեջ էր թե՛ հողատիրոջ և թե՛ պետության հզորացման գաղտնիքը, և նաև այն, որ որպես տնտեսության զարգացման հիմնական ուժ՝ գյուղացիությունն իր համար սահմանված օրենքների չափով պաշտպանված էր: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի կայացման և կայունության հիմնական գրավականներից մեկը գյուղացու նկատմամբ այնպիսի իրավաատնտեսական հարաբերությունների կիրառումն էր, որոնց հիմքում ընկած էր նրա աշխատանքի ամենալայն խրախուսումը, որն էլ պետության քաղաքական և տնտեսական հզորության երաշխիքն էր: Կիլիկիայի հայկական թագավորությունում սոցիալական ցանկացած շերտ իր համար սահմանված օրենքների և դրանցից բխող իրավունքների չափով պաշտպանված էր:

Յոթերորդ: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի գլխավոր ինստիտուտը արքունիքն էր՝ արքայի գլխավորությամբ: Արքունիքը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համակարգի բուրգի գագաթն էր: Արքունիքը տնտե-

սական հարաբերությունները կարգավորող և տնտեսական քաղաքականությունն իրականացնողն հիմնական կառույցն էր: Թագավոր և արքունիք հասկացողությունները համահունչ են եղել: Տնտեսական կառավարումը գլխավորապես եղել է թագավորի ձեռքում, և նա արքունիքով հանդերձ եղել է տնտեսական և քաղաքական կառավարման կենտրոնը: Արքունիքը՝ որպես գլխավոր ինստիտուցիոնալ կառույց, ունեցել է իր ենթակառուցվածքային տարրերը, որոնք իրականացրել են պետության այս կամ այն բնագավառի կառավարումը: Դրանք եղել են գործակալությունները՝ ի դեմս՝ պայլության, սեղանապետության, մաքսապետության, սպարապետության և արքունի քարտուղարության (կանցլեր կամ ջանցլեր):

Ութերորդ: Կիլիկիայի հայկական թագավորությունում արքունական և իշխանական կալվածքների տերերը միաժամանակ եղել են վարչական ղեկավարներ: Վարչական տեսանկյունից պետությունը բաժանված էր գավառների (թվով երեսունի), որոնք կազմել են աշխարհներ: Տեղական կառավարման օղակ էր եկեղեցին: Ինչպես թագավորն էր ամբողջ պետության մեջ զբաղեցնում տնտեսական բուրգի գագաթը, այնպես էլ եկեղեցական կալվածքներում հոգևոր աստիճանակարգության բարձրագույն աստիճանը պատկանում էր կաթողիկոսին: Հոգևոր դիրքերի առաջնահերթությունը որոշիչ է եղել տնտեսական դիրքերի համար. ինչքան բարձրաստիճան են եղել հոգևորականները, այնքան բարձր է եղել նրանց տնտեսական կարգավիճակը: Թագավորն ու իշխանները հետևողական են եղել սահմանափակելու համար եկեղեցու՝ որպես համապետական առումով տնտեսական գործառույթներ կատարողի իրավունքը, որի հետևանքով այն մնում էր տնտեսական գործառույթներ իրականացնող ինստիտուտ միայն սեփական տիրույթներում: Այլ խոսքով՝ **Կիլիկիայի հայկական թագավորությունում եկեղեցին տեղական նշանակության տնտեսական կառավարող մարմին էր, իսկ համապետական նշանակությամբ՝ լոկ հոգևոր մարմին՝ զերծ քաղաքական լծակներից:**

Տեղական կառավարման կարևորագույն օղակներ էին իշխանական ինստիտուտները՝ և' տնտեսական և' վարչական առումներով: Իշխանները կամ պարոնները գործադիր, դատական, զինվորական իշխանության գլխավոր մարմնավորողներն էին տեղերում:

Աշխարհները ղեկավարել են պարոնները, իսկ վերջիններիս ենթակայության տակ են գտնվել գավառապատները, որոնք օժտված են եղել վարչա-տնտեսական, ռազմական և դատական լիազորություններով: Գավառապետերին կից գործել են ծերակույտեր, որոնք մասնակցել են գավառի կառավարմանը, հարկերի և տուրքերի բաշխմանը և գանձմանը:

Տեղական կառավարման մյուս ինստիտուտները եղել են քաղաքային ինքնավարության մարմինները, որոնք կոչվում էին դասային խորհուրդներ՝ քաղաքագլխի ենթակայության տակ:

Տեղական կառավարման ամենափոքր օղակը գյուղական համայնքն էր, որի կարգադրիչ մարմինը ավագների խորհուրդն էր:

Իններորդ: Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերի մեջ պետք է ներառել դատարանները, քանզի նրանք իրականացնում էին նաև տնտեսաիրավական գործառույթներ: Դատաիրավական համակարգը նաև արտադրատնտեսական հարաբերությունները կարգավորող կարևորագույն օղակ էր՝ ինստիտուցիոնալ կառույց տնտեսական համակարգում:

Տասներորդ. Կիլիկիայի հայկական թագավորությունում տնտեսական հիմնահարցերի լուծման փորձն ուսանելի է ներկայիս Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների տեսանկյունից: Այդ ուսանելիությունը կայանում է հետևյալ տարբերությունների ընկալումներում.

ա) Կիլիկիայի հայկական թագավորությունում տնտեսական խնդիրների լուծման ամենակարևոր գրավականը, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, այն էր, որ այնտեղ պետության տնտեսական հզորությունը բացատրվում էր նրա կարևորագույն ճյուղերի պետական սեփականություն լինելով: Այդ մենաշնորհը տարածվում էր արտաքին և ներքին առևտրի, տարանցիկ ուղիների, ընդերքի հարստությունների վրա, որոնք ՀՀ-ում սեփականաշնորհված են:

բ) Հայաստանի Հանրապետությունում թեև փորձ է արվում աստիճանաբար կատարելագործել հարկային համակարգը, բայց երկրի համար ազգային անվտանգության նշանակության տնտեսական ոլորտներում հաստատված կենսակերպը երևէ չի կարող կայուն դարձնել հարկային համակարգը, քանի որ տնտեսավարող սուբյեկտները նաև պետական չինովնիկներ են, որոնց կողմից հարկերը չթաքցնելը դյուրին խնդիր է:

գ) Կիլիկիայի հայկական թագավորության ծաղկուն շրջանում ճկուն քաղաքականություն է որդեգրվել օտարերկրյա ներդրողների նկատմամբ: Նրանցից շատերը նույնիսկ ազատվել են հարկերից:

Կիլիկիայի հայկական թագավորությունում բավականին նուրբ և արդյունավետ քաղաքականություն է իրականացվել գյուղացիության նկատմամբ, որը նույնպես ուսանելի է ՀՀ-ում տարվող քաղաքականության համար: Գյուղացու աշխատանքի արտադրողականության բարձրացման համար Կիլիկիայում հողի բաժանումը կատարվել է հավասար, ըստ «երդերի» և առանձին գյուղական համայնքների միջև դրվել են հստակ սահմաններ: Համայնքների անդամներն սկզբնական շրջանում հարկեր չեն վճարել, որը կարևոր խթան էր գյուղացու տնտեսության զարգացման համար: **Գյուղացիական մասնավոր տնտեսությունը մինչև իր աշխատանքի արդյունավետության բավարար մակարդակի հասունացումը, եղել է հարկերից ազատ, որը գյուղատնտեսության զարգացման կարևոր պայմաններից է:**

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ներսես Լամբրոնեցու և Վահրամ Ռաբունու դերը կիլիկիահայ իրավական մտքի զարգացման գործում, «Օրենք և իրականություն» հանդես, թիվ 183, Երևան, 2011, էջ 12 - 14:

2. Պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները Սմբատ Գունդստաբլի իրավական մտածողության մեջ, «Օրենք և իրականություն» հանդես, թիվ 186, Երևան, 2011, էջ 37 - 40:

3. Եկեղեցու տնտեսական դերն ու գործառույթները Կիլիկիայի հայկական թագավորությունում, «Մխիթար Գոշ» հանդես, թիվ 33, Երևան, 2012, էջ 132 - 136:

4. Արքունիքի տեղը Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերում, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011, թիվ 3, էջ 103 - 109:

5. Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսակարգի ձևավորումը և առանձնահատկությունները, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 15, Երևան, 2012, էջ 149 - 156:

6. Գյուղացիության տեղը Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հիերարխիայում, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 2(5), էջ 59 - 66:

Аракелян Григор Самвелович

Экономическая система армянского Киликийского царства и его институциональные основы

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 “Экономическая теория”

Защита состоится 8 ноября 2013 г. В 15:00 на заседании специализированного совета ВАК РА 015 по экономике Ереванского государственного университета по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Кандидатская диссертация состоит из введения, трех глав и пяти подглав (В печатном виде всего 115 стр).

Введение состоит из современности проблемы, ее ученой новизны, степени изученности методологии, прикладного значения и экспертизы.

Первая глава, которая названа **«Экономический строй Армянского Киликийского царства»,** состоит из двух подглав. Первая глава посвящена особенностям развития экономического строя Армянского Киликийского царства, которые обусловлены влиянием армянского национального, византийского и европейского строя.

Во второй главе раскрыта сущность Армянского Киликийского царства. Здесь сделана попытка сверху вниз раскрыть элементы этих экономический строев, в которых на первом месте находится суд, с помощью которого царь осуществляет свое правление, и который считается не только создателем правовой основы других составляющих экономических факторов, но и определяющим этих факторов. В основном они регулировались «Судебной книгой» Смбата Гундстабла. Царь был не только воплощением высшей экономической и общественной власти, но и высшим собственником земли. Богатства и плоды земли в основном были его собственностью.

В феодальном строе армянского Киликийского царства третье место занимает крупное авторитетное землевладельчество. Со стороны других собственнических прав, эту позицию также удерживали крупные правители. Крупные землевладельцы здесь именовались феодалами или господинами. Землевладельцы феодалы были владельцами земли, то есть они располагали их имениями, которые назывались «родина», по закону наследственной собственности. Феодалы не владельцы родины располагали своими владениями на условных правах, и не по наследственной собственности, а потому, что они получили их как награду за разные услуги. Такие имения назывались «дарственные».

В феодальной иерархии армянского Киликийского царства важное место занимало церковное землевладение. В этой иерархии эта степень была прибавлена к степени землевладельца-феодала.

На самой низшей ступени феодальной иерархии находятся свободные сельчане, которые являются мелкими собственниками и членами сельского общиного совета.

Третья глава, которая названа, **«Институциональные основы армянского Киликийского царства»,** состоит из трех подглав. В первой представлен суд и его строение, как главного института. Реализующие экономической политики короля –это княжество или опекунство, сеганапетство, спарапетство. Владелец владельцев или господин господинов, который так же назывался большой господин, был помощником короля по дворянским делам. Ганцлер или канцлер управлял судебным секретариатом, другими словами атенадпир или дпрапет.

Вторая подглава относится к местным институтам правления. Здесь освещается и церковь и властвующий домен, то место, которое они занимают в экономике этого государства. А это означает, что они являются экономическими институтами местного правления.

Третья подглава посвящена судебным институтам и их экономическим функциям. Судебный институт находится вне экономической системы, но без него невозможно представить состояние этой системы, потому что суды выполняют также функцию правления экономической политики, без которой невозможно развить никакую экономическую систему.

Третья глава, которая названа **«Сравнительный анализ экономических механизмов управления армянского Киликийского царства и Республики Армении»** представляет из себя эих экономики в сравнении.

Когда мы рассматриваем произошедшие и происходящие улучшение в РА с точки зрения поощрения основных производительных сил, их деятельности, то, сравнивая с политикой армянского Киликийского царства мы убеждаемся, что с расстояния веков, нам по прежнему есть чему учиться на пути решения экономических проблем РА.

Главные области армянского Киликийского государства принадлежали государству, суду или царю. Этому принадлежала заслуга внешней торговли, импорта и экспорта.

Государство имело правильную политику по отношению к главной производительной силе - фермерам и мастерам, новоявленные экономики временно избавляли от налогов до их полного становления, и только потом определялись налоги, таким образом, чтобы не нарушалась их жизнедеятельность.

В независимости от социальной разности, места в феодальной классификации, каждый слой общества имел определенные законы, и был защищен правами, для него были созданы возможности работать и творить. Все это не потеряло своей значительности в РА.

В заключении собраны все концепции, которые были обоснованы в изложении диссертации.

Grigor Arakelyan

Economic system of the Armenian Kingdom of Kilikia
and its institutional fundaments

Summery of Dissertation submitted to persue Ph.D in Economics in the field of
"Economic theory" 08.00.01
The Defense of the Dissertation will take place at 15:00 on November 2013 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at Yerevan State University.
Address: 52, Abovyan str., Yerevan, RA.

SUMMERY

The thesis for the obtention of the PhD degree consists of the introduction, three chapters and five subchapters.

Introduction represents the actuality of the problem, its scientific novelty, degree of study of methodology, applied value and examination.

The first chapter which is titled "An economic system of the Armenian Kingdom of Kilikia", consists of two subchapters. The first chapter is devoted to the examination of development of an economic system of the Armenian Kingdom of Kilikia which are caused by charactarations of the Armenian national, Byzantine and European system.

The second chapter represents the essence of the Armenian Kingdom of Kilikia. Here the complete study is made to open elements of these economic systems, therefore on the first place in the system is represented court by means of which the monarchy rules and which is considered not only the foundation of a legal basis of other components of economic factors, but also defines the basis of thesis. Generally they were regulated by "The judicial code" created by Smbat Gundstabla. The monarch was not only an embodiment of the higher economic and public authority, but also the highest landlord. Richness and earth fruits generally were his property.

In a feudal system of the Armenian Kingdom of Kilikia the third place is taken by a large authoritative Pandfordino. From other proprietary rights this position also was held by large governors. Large landowners here were called as feudal lords or lords. Landowners feudal lords were landowners which were called "homeland", under the law of hereditary property. Feudal lords which were not the owners of the homeland had the possession on the conditional rights and not on hereditary property but because they received them as an award for different services. Such manors were called "donative".

In feudal hierarchy of the Armenian Kingdom of Kilikia the important place was taken by church landowning. In this hierarchy this degree was added to degree of the land owner feudal lord.

At the lowest step of feudal hierarchy are civilians who are small owners and members of village communal council.

The third chapter titled “Institutional bases of the Armenian Kingdom of Kilikia” consists of three subchapters. In the first subchapter the court and its structure is represented as main institute. Realizing economic policy of the monarch is a principality or guardianship, a landlords, a generals. The owner of owners or master of lords chief called assistant to the king on noble affairs. Chancellors operated to judicial secretariat, in other words assistant to the court.

The second subchapter represents local institutes to the board. Here both churches and the donunating domain the place which belongs to the state. And it means that they are economic institutes of local board.

The third subchapter is devoted to judicial institutes and their economic functions. The judicial institute represents another branch without which it’s impossible to represent a state of this system.

The chapter 3 represents “ the comparative analysis of economic mechanisms of managements of the Armenian Kingdom of Kilikia and the Republic of Armenia” which is economy in comparison.

When we consider occurred and occurring improvement in RA from the point of view of encouragement of the main productive forces, their activity that comparing to policy of the Armenian Kingdom of Kilikia we are conviced that from distance of centuries we still have what to study in a way to solve the economic issues of the RA.

The main areas of the Armenian Kingdom of Kilikia state belonged to the court or monarchy, it is possessed as a merit of foreign trade, import and export.

The state had the correct policy in relation to the main productive force farmers and masters, newly appeared in the economy had temporarily relief from taxes before their full formation. Afterwards taxes were paid in a way not to break their activity.

In independence from the social difference a place in the feudal activity each sector of society had certain laws, and was protected by the rights and there were opportunities to work and create. All this continues its relevance existence in our days.

In the conclusion all concepts which were proved in our thesis statements are collected from the study which is represented with more details in our thesis.